

Ա.Բ.ԿԱՐԻՆՅԱՆ

•

ՆՈՎՆԱՆԵՍ
ԹՈՒՄԱՆՅԱՆ

692

Recd
1971



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ им. М. АБЕГЯНА

А. Б. КАРИННЯН

О В А Н Е С
Т У М А Н Я Н

(ВОСПОМИНАНИЯ, СТАТЬИ)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
Е Р Е В А Н 1 9 7 1

929; 891, 981 Թրուստիան

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Խ. ԱՐԵՂՅԱՆԻ ԱՆՎ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. Բ. ԿԱՐԻՆՅԱՆ

ՀՈՎ, ՀԱՆՆԵՍ
ԹՈՒՄԱՆՅԱՆ

(ՀՈՒՇԵՐ, ՀՈԴՎԱԾՆԵՐ)



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ Գ.Ա. ՀՐԱՏԱՐԱԿԱԶՈՒԹՅՈՒՆ
Ե Ր Ե Վ. Ա. Ն 1971



7-2-3



Ե Ր Կ ՈՐ Խ Ո Ս Ք

Հայաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, գրականագետ և հրապարակախոս Ա. Բ. Կարինյանը ավելի քան 60 տարի հարստացրել է հայ մշակույթը արժեքավոր ստվարաժապավիտ մեմուարություններով, հոդվածներով ու հրապարակախոսական ելույթներով:

Հայն է եղել վաստակավոր գիտնականի հետաքրքրությունների շրջանը և ուղիտեղ իր ստանձնակի տեղն ունի հայ ժողովրդի մեծ բանաստեղծը՝ Հովհ. Թումանյանը.

Ընթերցողին ներկայացվող այս գրքույկը, որ ընդգրկում է Ա. Կարինյանի հուշերը և տարբեր աշխատություններով մամուլում

հրապարակված երեք հոդված, չի սահմանափակում հեղինակի՝ Թումանյանին նրվիրած աշխատանքների ցանկը: 20-ական թվականներից մամուլում հանդիպում ենք ուշագրծւոլ շատ հոդվածների, որտեղ բանաստեղծը հանդես է գալիս ուսումնասիրության և գնահատանքի միանգամայն որոշուն ձևով և բովանդակությամբ:

Այսօր ստանձնապես արժեքավոր են հեղինակի հուշերը. դրանք ընդգրկում են բանաստեղծի կյանքի և հասարակական գործունեության 1921 թվականը: Թեպետ կարճ է տևել Հովհ. Թումանյանի և Ա. Կարինյանի բարեկամությունը, բայց անցընջելի տառապանքներ են թողել մեծ պաշարի բովոլ ահագն էրիտասարդ և խանդուն գործչի վրա:

Ես գրելով այնպես մի ժամանակաշրջանում, երբ Թումանյանն արդեն բառորդ հար կանգնած էր հայ հասարակական մտքի կենտրոնում և իր ստեղծագործությամբ հմայել էր ժամանակի բոլոր նշանավոր բուսջադեն գործիչներին, Ա. Կարինյանը հոգնապես, տակալին անձանոր Թումանյանին, ուսումնասիրել էր նրա ըստեղծագործությունը և ուներ իր անվերապան բարձր կարծիքը գրողի՝ ինչպես գրական վաստակի, այնպես էլ հասարակա-

կան գործունեության մասին: Այնպես որ առհասկա՛ն ծանոթությունը մի նոր առա՛խնանի հասցրեց Ա. Կարինյանի ունե՛յած տպավորությունը մեծ գրողի մասին:

1921 թվականը եկավ է՛լ առավել հարձատացնելու գործիչ Թումանյանի կյանքի բազմաթուփանդակ տարեգրությունը. նրա երկու նշանավոր ճամփորդությունները Երևան և ապա Պոլիս մեկնելը կարևոր դեր են կատարել նոր Հայաստանի ժողովրդի խաղաղությունն ապահովելու համար, նրա պատե՛լ են Երկրի քաղքաղված տնտեսության ձկերակահեղձանը ու կուլտուրական վերածննդին և, մանավանդ, արտասահմանյան հայությանը Սովետական Հայաստանի հետ կապելու գործին:

Լինելով այդ կարևոր իրադարձությունների ականատեսը, լսելով Թումանյանի իմաստուն և հետաքրքիր գրույցները Հայաստանում ստեղծված նոր կարգերի, ժողովրդի ապագայի ու ճակատագրի մասին, Կարինյանը իրավացիորեն գալիս է այն եզրակացության, որ բանաստեղծն իր սմբող՝ էությանը կանգած էր «...նոր հասարակության վեհապանծ շենքը» կառուցող մեծ բանակի առաջին շարքերում:

Բնական է, միանգամայն, որ գրող և գործիչ Թումանյանի այն գործերն են

նիւցքել Ա. Կարինյանին, որտեղ ավելի ուղղակի է երևում Թումանյանի ժողովրդասիրությունն ու ազատասիրությունը: Նա բարձր է գնահատել բանաստեղծի խաղաղասիրությունն ու ժողովուրդների բարեկամության նկատմամբ ունեցած խոր հավատը:

Հեղինակը հատուկ ուշադրություն է դարձրել գրողի հետաքրքրությունների բազմազանությանը, դեպի ժողովրդական ստեղծագործությունը, հատկապես հեքիաթներն ունեցած սերը և այլն:

Թումանյանի մասին գրած Ա. Կարինյանի հոշերը, հոդվածների հետ միասին սաւեւծում են մեծ գրողի հետաքրքրական մի դիմանկար:

Բանաստեղծի ստեղծագործությունն ուսումնասիրելիս հեղինակը չի բավարարվել միայն խոշոր երկերի՝ վաղուց ընթերցողների սեփականությունը դարձած կանոնիկ տեքստերով: Նա հանգամանորեն քննել է սյունների ստեղծագործական պատմությունը իր մանրամասնությամբ, սկսելով և տարբերակներով («Անուշ», «Հատաչանք», «Հազարան բլուր» և այլն) և ըստ ամենայնի գնահատել սյունի աշխատասիրությունը, սեփական գործի նկատմամբ ունեցած պահանջ-

կոտորությունը և պատասխանատվությունը:

Ա. Կարինյանը հետաքրքրական դիտողություններ ունի «Բայրոն և Թումանյան» հարցը քննելիս. նրա կարծիքով հայ բանաստեղծը անգլիացի գրողին գնահատել է նախ և առաջ որպես *բողոքի* և *ըմբռնատության երգիչ*, ու դրա ապացույցը տեսնում է ոչ միայն Թումանյանի կատարած թարգմանություններում (նյութը ընտրելու տեսակետից), այլև «Հառաչանքում» նկատում է բայրոնական ազդեցության հետքեր:

Ուշադրությամբ հետևելով Թումանյանի թարգմանություններին, Ս. Բ. Կարինյանը գտել է այն եզրակացության, որ այստեղ էլ հումանիստ գրողը, օտար գրականությունը ծառայեցրել է իր գաղափարների պրոպագանդանը:

Թումանյանի մասին գրվող յուրաքանչյուր ուսումնասիրություն կոչված է համալրելու այն հսկայական նյութը, որ տասնամյակներ շարունակ կուտակվում է շնորհիվ մեր մշակույթի անխոնջ գործիչների. դրանցից ամեն մեկը յուրովի ծառայում է թումանյանագիտությանը, նպաստելով ժամանակի ընթացքում ավելի ու ավելի ամբողջացնելու մեծ բանաստեղծի անկրկնելի դիմանկարը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Տակալին 1909-ին, իմ ուսանողության տարիներին, Վահան Տեքյանը Պոշկինի մասին խոսելիս հաճախ անցնում էր Թումանյանի պոեզիայի քննարկմանը:

— Թումանյանն էլ մեր Պոշկինն է, հայ ժողովրդի ամենապաշտոն և մեծ բանաստեղծը:

Ապա ընդգծում էր, որ Հովն. Թումանյանի պոեմները կարող են պատվավոր տեղ գրավել «համաշխարհային գրականության պանթեոնի» մեջ:

— Երբ Սոբաշնիկովները Սոֆոկլեսի և Էվրիպիդեսի երկերի հետ միասին հրատարակեցին նաև Թումանյանի երկերի ռուսերեն թարգմանությունը, դուք է՛լ չէք կարողանա վիճել և առարկել...

Այդ օրերին եւ թերահավատութեամբ էի արձագանքում Վահան Տերյանի խոսքերին:

— Տաղանդավոր բանաստեղծ է, շատ տաղանդավոր, բայց և այնպէս հեռու է Գուշկինից:

Գուշկինյան ստեղծագործությունը Տերյանի համար արվեստի գերագույն բարձունք էր: Երբ նա էքսպանսիվ ոգևորությամբ ասում էր՝ պուշկինյան ուժ, պուշկինյան ոճ, պուշկինյան պարզություն, դրանով արդէն ընդգծում էր կարծես գերադասելի տալանտի ելակետն ու որոշում իր դիրքը որևէ բանաստեղծի կամ պոետի նկատմամբ:

Ռեակցիայի տարիներին մենք սուր պայքար էինք մղում հատկապէս դաշնակցականների դէմ: Այնքան էլ դուր չէր գալիս մեզ այն, որ դեմոկրատ բանաստեղծը, այնուամենայնիվ, դաշնակցության դէմ հանդես չի գալիս վճռական և կտրուկ:

— Շատ լավ է թարգմանել, — ասում էինք մենք, — Լոնգֆելլոյի «Հայավաթի երգի» նախերգանքը: Բայց մի՞թե կարելի է այս օրերին անդորր սրտով պոետել մարտնչու՞ն ու բախվող բանակների ռազմադաշտում «խաղաղության չիբուխը» բերնին:

— Ծիշտ է,— պատասխանում էր Տեր-
յանը: Դա ամենաթիւն բան է: Բայց ինչո՞-
ւեր դուք կարծում, թե խոսելով և ակնար-
կելով խաղաղության մասին, Թումանյանը
ձեր երևակայած պացիֆիստն է: Ամենե-
վին ոչ: Իմ համոզմամբ, բանաստեղծի նը-
կարագրած «խաղաղությունը» հեղափո-
խական խմաստ ունի համեմայն դեպս, ո-
րոշակի կերպով ուղղված է իշխողների և
շահագործողների բանակի դեմ: Իր խա-
ղաղության դրոշմ էլ բանաստեղծն ուղ-
ղում է բռնակալների դեմ: Նա ակնար-
կում է շատ պարզ բոլոր ազգությունների
եղբայրության մասին: Ահա ինչու նրա
բարոգած «խաղաղությունն» իրականում
դառնում է ժողովուրդների բարեկամու-
թյան վեհ գաղափարների ուրույն պրո-
պագանդ:

Վահան Տերյանի դիտողությունը տե-
ղին էր: Ազգայնական կոիվների հեղի-
նակների դեմ Թումանյանը մղել է անդույ
և անողորմ կոիվ: Երբ նա ուղևորվում է
ադրբեջանցի բռնավորների մոտ և կոչ ա-
նում միանալ հայ շինականներին՝ ընդդեմ
ցարական բռնակալության, մեծագույն ի-
րարանցում է ստեղծվում վայրագ շովի-
նիստների շրջաններում: «Հայավաթի եր-
գի» նախերգանքը մեծ բանաստեղծի հա-

մար հիբրավի եղել է ժողովրդի թշնամի-
ների դեմ ուղղված երգ: Միայն հետագա
տարիներին՝ 1921-ին, ինձ համար հաս-
կանալի դարձավ Վահան Տերյանի մեկ-
նաբանության իսկական իմաստը: Ծառ
անգամ թռուցիկ գրույցների ժամանակ
Թումանյանը բացատրում, պարզաբանում
էր իր իմաստասիրությունն էլ, ստանձին
դիտողություններն էլ: Հստակ և բավական
հետևողական հայեցություն էր դա:

— Խաղաղություն խրճիթներին, պատե-
րազմ պալատներին, — այս է ահա, — ա-
սում էր բանաստեղծը, — իմ դավանած
իմաստասիրությունը: Իմ չիրուխն էլ հենց
Էդպիսի խաղաղության մասին է ակնար-
կում և հիշեցնում: Իմ համոզմամբ, Էդ-
պես պիտի հասկանանք և Լոնգֆելդոյի
«Հայավաթի երգի» իմաստը: Միևնույն ի-
մաստն ունեն ուս ժողովրդական երգե-
րը, հեքիաթներն ու բիլինաները: Երկրա-
գնդի բոլոր ժողովուրդների ստեղծագոր-
ծության հիմնական մոտիվը հենց խաղա-
ղության միջազգայնական այդ պատգամն
է...

Այսօր, երբ գրի եմ առնում իմ հուշերը
հայ ժողովրդի մեծ բանաստեղծի մասին,
վերոգրյալ խոսքերը կարծես ավելի որո-
շակի են հնչում ինձ համար: Եվ ամեն

անգամ, երբ թերթում եմ Թումանյանի երգերն ու պոեմները, միշտ ստաջին հերթին հիշում եմ հենց բանաստեղծի այդ նվիրական խոսքերը ժողովուրդների բարեկամության մասին...

Պատանեկության տարիներին արդեն ես ուսումնասիրել եմ Հովն. Թումանյանի մի քանի հայտնի երկասիրությունները: Այդ ժամանակ էլ խոշոր տպավորություն է թողել ինձ վրա «Սասունցի Դավիթը»: Բաքվի նավթային շրջաններում՝ Բալախանի, Բիբի-Էյբաթ արվարձաններում, բանվոր-բոլշևիկները նույնպես ստանձին սիրով կարդում էին հատկապես բանաստեղծի հենց այդ պոեմը: Բանվորական ժողովներում հաճախ Ստ. Շահումյանն էլ անգիր արտասանում էր Թումանյանի երկերից քաղված որևէ հատված:


Հովն. Թումանյանի հետ ես ստաջին անգամ ծանոթացել եմ Թիֆլիսում, ճիշտ այն տեղոտ օրերին, երբ Անդրկովկասում նոր էր միայն հաստատվում սովետական իշխանություն: Խոշոր տպավորություն էր թողել ինձ վրա այդ հանդիպումը:

...Նիհար, բարձր հասակով, հաճախ կես-ուրախ, կես-տխուր ժպիտը շրթներին, միշտ աշխույժ և կենդանի զրույցի սիրա-

հար, Թումանյանը հենց առաջին անգամից հմայում էր: Ավելի շատ ինքն էր խոսում: Զրույցի ժամանակ անդադար պատմում էր հայ ժողովրդական ստեղծագործության անսպառ գանձարանից առնված աշխարհայինների մասին և կանգ էր առնում ավելի բնորոշ առակների վրա: Ինչ էլ ասում էր միևնույն խոսքերը, ինչ որ շարունակ կրկնում էր Մոսկվայից եկած նոր եկվորներին:

— Էդպես էլ զարմանալի բան, առաջին անգամ հեռու հյուսիսից գալիս են Էդ տարօրինակ «սալդաթները»: Լավ չեն հագնված ու զինված, բայց ժողովուրդների եղբայրության վսեմ դրոշակն է դրանց դրոշակը. մեծ պատգամներով են մտնում մեր երկրի սահմանները: Էդ էլ է պարզ: Խաղաղություն են բերում և մեր մեծ երկրագնդի բոլոր սահմաններում էլ կամենում են աշխատանքի և խաղաղության նոր իշխանություն հաստատել: Ի՞նչ մարդ է Լեւինը՝ չլաված ու չտեսնված հանճար: Դե՛, ես էլ հո լավ գիտեմ, որ եղել են հին, շատ հին օրերին Գրակքոս եղբայրներ, եղել է ստրուկ-քմբուտների գլխին կանգնած դեկավար Սպարտակ, եղել են հեղափոխական մեծ գործիչներ: Շատ գրքեր են

կարդացել անցյալի մեծ գործիչների մա-
սին: Բայց դրանք հո ամբողջ երկրագըն-
դին չեն ասել իրենց խոսքը: Իսկ Լենինը
ամբողջ աշխարհին է դիմում, համայն
մարդկությանը. և շատ պարզ էլ ասում է՝
վերջ պիտի տանք էդ անիծյալ պատերազ-
մին, վերջ պիտի տանք իշխանների, կալ-
վածատերերի, կապիտալիստների տիրա-
պետությանը: Անհրաժեշտ է վերջապես
ստեղծել արդար աշխատանքի հզոր իշ-
խանություն: Լենինն էդ ամենն ասում է և
միաժամանակ անցնում գործի: Ասում է՝
կարելի է իրագործել մարդկության լավա-
գույն մտածողների բարձր իդեալները և
կոչում է հենց էդ իդեալների համար: Բա
ո՞ր խելառ մարդը հիմի չի կոչի էդպես
մեծ դրոշի ներքո: Էդ դրոշակն էլ կարմիր
է: Վրան մի էնպես բան է նկարված, որ
զարմանալի է. մուրճ ու մանգաղ՝ աչսինքն
բանվորի և գյուղացու միություն՝ աշխա-
տանքի մարդկանց եղբայրություն: Չը-
տեսնված դրոշակ է, որ մարդու սիրտն է
այրում—արթնացնում է ամենանորբ մեր
զգացումները. հենց էն է ասում, ինչ որ
հարկավոր է ասել, բայց մինչև...
բան պարզ ու հասկանալի լինելով ոչ ոք
չի ասել:



Տարբեր երանգներով Հովհ. Թուման-
յանը կրկնում էր իր այդ խոսքերը և ավե-
լացնում.

— Ի՞նչ են մտածում մեր էդ հիմար
մարդիկ, էդ դաշնակցականները և հնչակ-
յանները: Մինչև էսօր չեն խրատվել ու
կարծես ամենևին չեն էլ ցանկանում խել-
քի գալ: Դրանցից շատերին հենց ես լավ
եմ ճանաչում, հին ծանոթներ շատ եմ ու-
նեցել: Իմ կարծիքով ժողովրդին է հարկա-
վոր բացատրել, անհրաժեշտ է լավ բա-
ցատրել, մեր հասարակ ժողովուրդը կհաս-
կանա:

Մի քանի անգամ ես եղել եմ Թուման-
յանի բնակարանում: Մի երկու անգամ
ճաշի է հրավիրել ինձ և իմ մի երկու ըն-
կերներին:

Ծաշին հավաքվել էր մեծ բանաստեղ-
ծի ամբողջ ընտանիքը՝ հայկական հին և
բազմամարդ ընտանիք՝ միաձույլ և կեն-
սորախ: Եռանդ և ուրախություն ներշնչողը
իմքը՝ Թումանյանն էր, մեծ սեղանի
ծայրին նստած նահապետը. ինձ գոնե
այդպես էր թվում: Բոլորն էլ սիրով և ակ-
նածանքով էին լսում. ընդհատում էին
զգույշ տոնով: Թումանյանը անեկդոտներ
էր պատմում, կանգ էր առնում ժողովրդ-
դական առակների վրա, խոսում էր հին

գրողների, բանաստեղծների, գործիչների մասին: Սովորական թամադա չէր:

Ամեն մի խոսքի և ակնարկի մեջ երեւում էր տաղանդավոր վարպետը, հայկոյտորայի նախանձախնդիր երկրպագուն: Ծատ անգամ սուսանձին սիրով իմաստալից տողեր էր բերում արեւելյան մեծ հումանիստ բանաստեղծների երկերից՝ Սաադիի, Օմար Խայամի, Ֆիրդուսու, Ջամիի բանաստեղծություններից: Մեկ-մեկ էլ ֆարսերեն էր ցիտում, ինքն էլ իսկույն թարգմանում և մեկնաբանում էր, սակայն միշտ շեշտում էր, որ ֆարսերեն չգիտէ: Ապա մի պատմությունը տակաւին չավարտած անցնում էր մի ուրիշ պատմության:

— Հա՛, էն էի ասում. միտս մի ուրիշ բան ընկաւ. մի էդ էլ ասեմ, որպեսզի չըմոռանամ: Խոսքը գինու մասին է: Գինին շատ լավ բան է: Ես լավ եմ հասկանում Օմար Խայամին: Զանազան տեսակ գինիներ են լինում: Հիմի մենք խմում ենք Վրաստանի գինին՝ Կախեթի գինին. շատ պատվական գինի է: Թե կուգեք իմանալ, ընկերական հավաքույթի, քեֆի համար Կախեթի գինուց լավ բան չի լինի: Ամեն գինի իր համն ունի. հայկական գինին էլ լավ է, շատ թունդ է սակայն, անասելի

տխարություն է բերում մեր հայկական էդ գինին: Ես լավ եմ փորձել, էդպես է: Իսկ Կախերի գինին ուրախացնում է: Լավ քեֆի համար Վրաստանի գինուց լավ բան չես գտնի:

Երջանիկ երկիր է: Պատմությունն էլ հենց էդ է հաստատում: Մեր եղբայրակից վրաց ժողովուրդն էլ շատ ծանր օրեր է քաշել, բայց էլի ավելի երջանիկ է եղել: Ամեն փոթորիկ անցել է ամենից սուաջ հայ ժողովրդի գլխով: Մեր հայրենիքի բնությունը շատ գեղեցիկ է և հզոր, բայց էլի էնքան մեղմ չի, ինչպես Վրաստանի բնությունը: Ծիշտ է, մեր Լոռվա լեռներում, ձորերում էլ նշմարելի է միևնույն մեղմությունը. Ղարաբաղ, Ջանգեզուր, էդպես չի: Լեռներն էդտեղ շատ հուժկու են և հզոր...

Օռաշից հետո հյուրերն անցնում են առանձնասենյակ: Բանաստեղծի արվեստանոցն է դա: Նստում ենք արևելյան կապերտով զարդարված թախտի վրա: Մեծ պահարանների մեջ շարված էին բազմաթիվ հրատարակություններ: Պահարաններից հանում էր մի քանի հատորներ, առանձին հրճվանքով ցույց տալիս հազվագյուտ գրքերը. միաժամանակ

հիշեցնում էր, թե ո՞ր հեղինակին ինչո՞ւ է սիրում և ինչո՞ւ է բարձր գնահատում:

Մենք խնդրում ենք պատմել իր երկերի մասին. ի՞նչ է գրում, ինչո՞ւ չի հրատարակում իր «Հազարան բլբուլը» և «Սասունցի Դավթի» երկրորդ մասը:

— Լավ եք ասում, շատերն են էդ մասին ասել, անհրաժեշտ է էդ անել, բայց ի՞նչ մեղքս ծածկեմ. հիմի, էս մեր օրերին բան դուրս չի գալիս: Հարկավոր է նոր բան գրել, էդ էլ են ասում ինձ. նոր ձև էլ է անհրաժեշտ, պետք է մի լավ մտածեմ էդ մասին էլ:

Շատ ու շատ բան կա անելու: Եթե հնարավոր լիներ նորից մի քսան տարի վերադարձնել, ի՞նչ լավ բան կլիներ: Հիմի է հարկավոր ապրել: Հիմի է անհրաժեշտ ուշադրությամբ դիտել-ստեղծագործել: Մեկ-մեկ պտտում եմ բազարում, մտնում եմ բուկինիատների մոտ. շատ հետաքրքրական է էդ բուկինիատների աշխարհը: Քրքրում եմ հին հրատարակություններ, մեկ էլ տեսնում եմ, ձեռքս է ընկնում մի որևէ հազվագյուտ գիրք: Իհարկե, դրանք էլ, էդ բուկինիատներն էլ աշխատում են խաբել, վաճառական մարդիկ են: Հին գլարներ շատ եմ սիրում, խաբում են, դուրս է գալիս կեղծիք, պող-

դելկա: Էդպէս բան էլ է պատահում: Այ, օրինակ, մի լավ մայեր: Իմ կարծիքով դա շատ լավ նկար պիտի լինի: Ասում են հայտնի Ռյուխարտի գործերից է:

Սեղանի դարակից հանում է խոշորացույցը և սուսջարկում դիտել, ուսումնասիրել նկարի տակ մանր տառերով գրված խորհրդավոր անվանատառերը: Հոլանդական բնանկար է: Տաղանդավոր վարպետի ստեղծագործություն է: Ներկերը խումացել են և մթնել, սակայն երևում է խոսուն բնանկարը:

Այնուամենայնիւ է և սուսնձնասեղանակում:

Թեյ են բերում Թումանյանի աղջիկները: Նորից բանաստեղծը կանգ է առնում Պուշկինի, Հոմերոսի, Էսքիլեսի, արևելյան մեծ հումանիստների վրա: Նորից դիմում ենք Թումանյանին, պահանջում շուտափույց կերպով ավարտել «Սասունցի Դավթի» երկրորդ մասը, խնդրում ենք վերջապէս կարդալ մի երկու հատված ձեռագրից: Թումանյանը մոտենում է ձեռագրերի պահարանին, բաց քիչ հետո հեռանում է պահարանից և նորից ասում. «Հարկավոր է կարդալ և բնկել, շատ քիչ բան է արված, գրելու դեռ շատ բան կա...»: Այլևս շատ դժվար էր համոզել բա-

նաստեղծին: Նա շեշտում էր միայն այն, որ դեռ շատ աշխատանք կա անելու:

Հյուրերից մեկը սկսում է կարդալ «Սասունցի 'Դավթի» այն տողերը, որոնք պատմում են կովի դաշտն ուղևորվող ժողովրդական հերոսի մասին:

Մեղմ երեկո էր: Հայ ժողովրդի սիրելի հերոսի խոսքերը հիշեցնում էին քաղաքացիական պատերազմի մեր աննկուն գործիչներին: Լուռ էին հյուրերը, և յուրաքանչյուրն այդ վայրկյանին իրեն հատուկ եղանակով էր մոտենում ժողովրդական հերոսի խոսքերին: Մեծ ուշադրությամբ էր լսում ինքը՝ Թումանյանն էլ:

Հարցնում ենք, իրավունք ունի՞ արդյոք բանաստեղծը փոփոխել ժողովրդական ստեղծագործության պոմեն:

— Իհարկե, ավելի լավ է միշտ հավատարիմ մնալ աղբյուրին, հետևել բնագրին: Սակայն առանց փոփոխություն մտցնելու անհնարին է կերտել նոր և ինքնուրույն գեղարվեստական ստեղծագործություն: Այոժեն էլ ունի նշանակություն, բայց հիմնականը գեղարվեստական վերամշակման նոր ձևն է: Հարկավոր է էնպես գրել, որ ժողովրդի խոսքը, հոգին ու սիրտը ցուցադրվեն: Նա ահա հենց էդպես եմ ջանացել մոտենալ նյութին: Իհարկե,

իմ պոեմի մեջ հաճախ խոսում է մեր լեռների գեղջուկը, բայց դուք տեսնում եք, Լիի, որ դա չի տարբերվում սասունցի շինականներից:

Հյուրերից ոչ ոք չի առարկում Թումանյանին:

— Հայ ժողովրդական առակներն էլ Լիպես եմ մշակել: — Նորից մոտենում է դարակներին:

— Ահա էստեղ հավաքել եմ մեր ժողովրդական հեքիաթների և առակների բազմաթիվ վարիանտներ: Կան անչափ արժեքավոր վարիանտներ: Ծրագրել եմ մի բան էլ գրել հատկապես հայ ժողովրդական հեքիաթների մասին: Մանրամասն ուսումնասիրել եմ ուրիշ ժողովուրդների, մանավանդ ուս ժողովրդի հեքիաթները: Կովկասագիտական հին ժողովածուների մեջ էլ հո բազմաթիվ նյութեր կան, թեև հայկական հեքիաթների մասին շատ քիչ են գրել մեր բանասերները:

Հետագայում ամեն անգամ, երբ տեսնում էի Թումանյանին, նա խոսք էր բաց անում առաջին հերթին հայ ժողովրդական հեքիաթների գիտական ուսումնասիրության և հրատարակության մասին:

— Երբ հրատարակության կհանձնվեն կանոնավոր կերպով խմբագրված հատոր-

ները, միմիայն մենք չենք լինի զարմացողները: Կզարմանան թե՛ ուս և թե՛ եվրոպական գիտնականները: Մեր մեծ հանցանքներից մեկն էլ էդ է. մինչև էսօր էլ կույրերի նման ենք: Սպասում ենք, որ էլի մի գեղեցիկ օր մի Վալերի Բրյուսով հրապարակ գա ու ասի.

— Մեծ գանձեր ունեք և անշնորհք մարդիկ եք, չեք կարողանում գնահատել:

Երբ կազմակերպվում է Հայաստանի օգնության կոմիտեն, Թիֆլիսից մի խումբ հայ գրողներ ուղևորվում են Երևան: Մեծ տպավորություն է թողնում եկողների վրա այս անգամ էլ Դեբեդի հայտնի ձորը: Առավոտյան թափանցիկ մշուշի մեջ անտառապատ լեռները և ձորերը շատ գեղեցիկ են: Այդ մասին էին պատմում Թիֆլիսից եկվորները ու ասալ ինչ-որ նոր տոնական տրամադրությամբ լցնում երևանյան փողոցները:

Թումանյանը առաջին հավաքույթի նախագահն էր:

Ժողկոմխորհի նախկին շենքի դիմաց, ռազմական կոմիսարիատի կողքին, կա մեկհարկանի փոքր մի տուն, որի արևելյան օրնամենտներով զարդարված դահլիճում կապացավ ժողովը. ներկա էին Լեոն,

Դեմիրճյանը, Ստեփան Զորյանը, Ստեփան Կանայանը, Տիգրան Հովհաննիսյանը: Որոշվում է կազմել արտասահմանյան հայ աշխատավորությանն ուղղված ընդարձակ մի կոչ: Այդտեղ շեշտվում է այն, որ նոր իշխանությունը հենվում է հայ ժողովրդի գերազանց մեծամասնության վրա և նպատակ է դրել զարկ տալ հայ կուլտուրայի զարգացման գործին: Առանձին կետերի մասին ժողովականները սկսում են վիճել: Լեոն նետում է շատ կարճ, ափորիզմների նման պարբերություններ: Թումանյանը առաջարկում էր ավելի մանրամասն գրել հատկապես կուլտուրայի մասին:

Նորակազմ միությունը, որքան հիշում եմ, պիտի ագիտացիա մղեր հակասովետական հոսանքների, մանավանդ դաշնակցականների պրովոկացիոն աշխատանքի դեմ: Այդ օրերին պրովոկացիան հակահեղափոխական կազմակերպությունների ձեռքին պայքարի մի զենք էր:

Հայ մտավորականության առաջավոր ներկայացուցիչների հավաքույթը ամենակարող կերպով կռվի էր ելնում այդ սեբանդաների դեմ և առաջարկում հայ ժողովրդի կենսունակ տարրերին համախմբվել նոր՝ սովետական իշխանության շուրջ:

Թումանյանը առանձին կենդանություն էր տալիս գրույցներին և վեճերին: Մոտենում էր յուրաքանչյուրին, պատմում իր ծանոթ բոլշևիկների, վրաց հայտանի գրողների, արվեստագետների, գործիչների մասին: Հաճախ խոսում էր Օրջոնիկիձեի մասին:

— Էլ ի՞նչ երկար խոսենք: Ամեն ինչ պարզ է: Հայրենիքն էստեղ է, են էլ երկրագնդի ամենադեմոկրատական պետության կողքին կանգնած, ուստի մեծ ժողովրդի ամբողջանը հենված ազատ հայրենիքը: Մեր այժմյան կոչն էլ արտասահմանի հայ աշխատավորներին հենց էդ պիտի սար....

Երևանում ապրող հայ գրողները մեծագույն ակնածանքով էին լսում Թումանյանին: Այդ պահին նա, հիբրավի, հայ կյանքիների լիազոր ներկայացուցչի նման մի դեմք էր Սովետական Հայաստանի մայրաքաղաքում:

— Մենք էլ միամիտ չենք,— ասում էր,— հայրենիքը քանդված է հիմնովին: Օստ քան կա անելու: Ինքան էլ հեշտ չէ նոր իշխանության գործը: Հարկավոր է և՛ կառուցել նորը, և՛ մրաժամանակ հուսալքվածներին նոր եռանդ ներարկել, ապա-

ցուցել, որ սովերված Հայաստանը կարող է ու պիտի վերածնվի:

Միշտ հարկավոր է հիշել անցյալի սև օրերը: Մահ էր ու կոտորած, անվերջ կոտորած, այժմ կյանք է ու խաղաղություն...

Հավ չեմ հիշում այսօր բանաստեղծի անչափ պատկերավոր ակնարկը մեր կարմիր բանակի մասին: Հիշում եմ միայն, որ նա ինքն էլ սուսնձին տրամադրությամբ էր պատմում.

— Դուք հո կարդացել եք Գյոթեի «Ֆաուստը»: Մեծ գործ է, գեղարվեստական և իմաստասիրական հանճարեղ արտադրություն: Գիտեք հո, որ Կուն-Ֆիշերը պատմա-փիլիսոփայական մեկնագրություն է գրել հենց Գյոթեի «Ֆաուստի» մասին: Ծատ ուրիշներն էլ գրել են: Հիմի էդ մասին չէ խոսքս: Հիշում եք հո էն տեսարանը, որ Մեֆիստոֆելը կանգնած է ու խոսում է Ֆաուստի հետ: Բոլշևիկները նոր ճշմարտության ավետաբերներ են, ժողովուրդների եղբայրության մեծ գաղափարների ջահակիրներ են: Հայ ժողովուրդը մահվան անդունդն էր գետնում, անդունդի արիին էր կանգնած: Էդ վայրկյանին բոլորն էլ, նույնիսկ հայությանը բազմաթիվ խոստումներ տվողները, ասացին

մեզ. «Դե՛ն, էլ ոչինչ չենք կարող անել, ձեր գլխի ճարը հիմի դուք պիտի տեսնեք...»: Շատ ծանր ու դաժան օրեր էին: Մենակ մնացինք, միանգամայն մենակ էինք: Սահմանիցն էլ մահն էր քայլում: Թարսի պես մեր երկիրն էլ սողքատ էր և քարքարոտ, ոչ մտվե՞ կար, ոչ էլ ծով, որ գոնե գրավեր հզոր պետությունների ուշադրությունը: Ահա հենց էդ ծանր ու դաժան օրերին հեռու հյուսիսից գալիս է էլի մեր դարավոր բարեկամ ոռոս ժողովրդի, այս անգամ վերջնականապես ազատագրված ժողովրդի, կարմիր բանակը, կանգնում է սահմանի մոտ, հրացանն էլ գետնին է դնում— ա՛յ էսպես— ու ստում է. «Դե՛, կանգնիր, սահմանն էս է: Կանցնես, ինձ հետ գործ կունենաս: Չեմ թողնի էս գծից անցնել...»: Ա՛յ, երբ հիշում եմ էդ օրերը, երբ տեսնում եմ ոռոս կարմիրբանակայինին, միտքս է գալիս Գյոթեի «Ֆաուստի» հիշված տեսարանը...

Պատմում էր նաև թիֆլիսյան դեմոկրատիայի մասին: Երբ մենջևիկները լեղապատառ Թիֆլիսից փախչում են, և քաղաք են հասնում կարմիր բանակի ստաջին զորամասերը, կենդանանում են քաղաքի փողոցներն ու հրապարակները: Փողոցներում խոնվում, հալաքվում են մարդկային

խմբեր և սկսում քննել նոր դեպքերի նշանակությունը: Սովորաբար այդ խմբակները շրջապատում էին կարմիրքաճակաչիներին և զրուցում օրվա դեպքերի մասին:

— Շատ անգամ,— պատմում էր Թումանյանը,— մեծ ուշադրությամբ լսում էի զանազան զրույցներ և վեճեր: Երևանյան հրապարակի անկյուններում, մեծ փողոցներում, մեծ շենքերի մոտ հա խոսում էին ու վիճում: Մեկ-մեկ էլ տեսնում էի, որ բոլորն էլ շրջապատել են մի կարմիրքաճակաչիի և զանազան հարցեր են տալիս: Կանգնում էի, նայում ու լսում: Ես հո շատ լավ եմ հիշում հին օրերի սալդաթներին: Փողոցում մոտենալն էլ անհնարին էր: Իսկ հիմի էդ հասարակ ունչալար-գինվորը փողոցում կանգնել է և էնպես է խոսում, կարծես միշտ էլ կլուրումն է խոսել: Յուրաքանչյուր հարցին պատասխան է տալիս և էն էլ ինչպիսի պատասխան: Մի քանիսը դրանցից հո շատ խելոք էին խոսում. երևում էր, որ կրթված էին, զարգացած. բայց կային նաև շատ պարզ, գուղական, հողեղեն ոճով խոսող կարմիրքաճակաչիներ: Դրանց լեզուն էլ կենդանի էր: Ա՛յ, դրանց ես միշտ ավելի մեծ ուշադրությամբ էի լսում: «Նոր մարդիկ են, իսկապես, նոր մարդիկ»,— լսում էի ես

ամենուրեք այդ օրերին, բոլորն էլ զարմանում էին, որ կարող են առանց վախենալու խոսել հրամանատարների հետ էլ:

Մի բան էլ է զարմանալի: Էդ առաջին օրերին քաղաքում գողությունն էլ կարծես պակասել էր: Մտածում էի, եթե Էդբան կարճ ժամանակվա ընթացքում Լենինին հետևողները կարողացել են ստեղծել նոր մարդկանց Էդպիսի շարքեր, ի՞նչ կլինի, երբ բոլշևիկների իշխանությունն ամրանա ամբողջ Անդրկովկասում:

Ինձ թվում է, որ առաջին օրերի այդ տպավորությունը շատ մեծ ազդեցություն է թողել Հովհ. Թումանյանի վրա: Նա չէր կարողանում մոռանալ վաղեմի իր այդ հուշերը: Հետագայում նույնիսկ ստամբուլյան հայ գրողների միջավայրում նա մի քանի անգամ կանգ էր առնում հիշատակված գրույցների վրա և աշխատում էր բնութագրել ազատագրական հեղափոխական մեծ բանակի խիզախ մարտիկին...

Թուրքիայի հին մայրաքաղաք Ստամբուլը 1921—22-ին յուրահատուկ մի քաղաք էր:

Տանկերեն լեզուն ավելի հաճախ լռվում էր քաղաքի ծայրամասերում և ապա բուն Ստամբուլի փողոցներում: Կենտրոնական վայրերը՝ ծովափնյա Ղալաթիան,

շքեղ Բերան և հարուստ պոլսեցիների թե-
զիդեցիան՝ Շիշլին, լեցուն էին օտար եկ-
վորներով, որոնց գերազանց մեծամաս-
նությունը կազմում էին սպիտակ էմի-
գրանտները: Դենիկիևի և Վրանգելի ջախ-
ջախված զորամասերի առանձին հատ-
վածները խմբվել էին Պոլսի շրջակա վայ-
րերում: Բազմաթիվ ռուսական ճաշարան-
ներ կային: Միշտ լեցուն էին այդ ճաշա-
րանները, և ամեն տեղ էլ հնչում էր ռուսե-
րեն լեզուն: Նույնիսկ ռուսերեն հատուկ օ-
րաթերթ էր լույս տեսնում տիւրահոշակ
Սուվորիևի որդու խմբագրությամբ:

Էմիգրանտ այդ «հյուրերն», իհարկե,
աշխատում էին պրովոկացիոն լուրեր տա-
րածել բոլշևիկների մասին:

Բոսֆորում իշխում էին օտարերկրյա
պետությունների ռազմաճակատները, իսկ քա-
ղաքի տարբեր մասերում էլ միևնույն պե-
տությունների հետախուզական օրգաննե-
րը: Ծաշարաններում և ռեստորաններում
վիստում էին լրտեսներն ու լրտեսուհիները:
Հայ դաշնակցական էմիգրանտներն էլ կա-
տաղությամբ օժանդակում էին հակաբոլ-
շևիկյան կազմակերպություններին: Չնա-
յած դրան, քաղաքի թերթերից մի երկու-
սը, հաճախ հակառակ իրենց ցանկության
արձանագրում էին հակահեղափոխական

գործամասերի քաջքաջման պրոցեսը բնորոշող շատ հատկանշական փաստեր: Ահա այդ օրերին էլ Ստամբուլ է հասնում Թումանյանը: Սովետական Հայաստանի պատվիրակությունը հանձնարարել էր ինձ ուղևորվել Ամերիկա, և ես էլ 1921-ին ստորում էի Ստամբուլում: Ինձ համար պարզ էր, որ որոշ մարդիկ կաշխատեն ումեն կերպ մեկուսացնել բանաստեղծին: Դաշնակցականները հատկապես ձգտում էին հակապրոպագանդ կազմակերպել և խանգարել Թումանյանի աշխատանքը:

Թուրքիայի հին մայրաքաղաքն այդ ժամանակ չափազանց կեղտոտ էր և անհրապույր: Բոսֆորից հեքիաթային մի սքանչելի քաղաքի էր նման: Սպիտակագույն պալատները, Չրադանի ապարանքը, գեղեցիկ մզկիթները և դեպի երկինք պացող բարձր մինարեները խորհրդավոր տեսք էին տալիս հեռու քաղաքին: Բայց երբ նստիլ մոտեցավ Ղալաթիայի համբավավոր նավամատուցին, և մենք իջանք նավից ու աղմկալից Ղալաթիայից անցանք դեպի շքեղ ու գրեթե նույնչափ աղտոտ Բերսն, հեքիաթը չքացավ: Բերսյի գլխավոր պողոտայի կողքի բոլոր փողոցները ասիական նեղ և կեղտոտ փողոցներ են:

Շատ գեղեցիկ են ասիական ափի՜ն տարածված հայտնի Իսկյոտարը, Կադիքյոյը, Մոդան: Գալաթիայից մի մեծ կամուրջ տանում է դեպի իսկական Ստամբուլը, զուտ տանկարճակ քաղաքամասը: Այդտեղ կային հնօրյա բյուզանդական Պոլսի գեղարվեստական պատմական հուշարձաններ, գեղեցիկ պուրակ, ճարտարապետական մեծագույն կոթողներ: Դուրեկան էին նաև երկհարկանի փայտաշեն գեղեցիկ տները, արևելյան ապակեպատ վերանդանները, ավելի մաքուր փողոցները: Սղմուկն էլ այնքան ուժեղ չէր Ստամբուլի խորհրդավոր այդ փողոցներում:

Մի երկու անգամ Թումանյանի հետ ուղևորվեցինք Բերայից դեպի Ստամբուլ, և մեզ համար ավելի նկատելի էր մեծ քաղաքի խոշոր այդ «թաղամասերի» արտատվոր հակադրությունը:

— Եվրոպական Բերան, — նկատում էր Թումանյանը, — Եվրոպայի կարիկատորան է՝ խառնիճադանջ, ապագգայնացած և աշխատելով կոմիվոյաժորներով լեցուն մի անհրապույր վայր: Իսկ Ստամբուլը ազգային կոլորիտ ունի, թեև Բերայի պողոտայի նման սղմկալից չէ: Փողոցներն էլ էդտեղ լուռ են և կարծես թե տխուր:

Թումանյանի ու Դանուշ Շանվերդյանի հետ միասին գնացինք սուլթանական պարսկ և ապա հասուկ թույլտվությամբ ստանալուց հետո մի քանի ամերիկացի տուրիստների հետ միասին մտանք Թոք-գարուի պալատը։ Պարետը բարձրահասակ ալբանացի զինվորական էր, հայտնի Աբդուլ Համիդի նախկին թիկնապահներից մեկը։ Դերասանի նման հանդիսավոր էր խոսում և աշխատում ընդգծել իր դիվիկատ վերաբերմունքը բոլոր տուրիստների նկատմամբ։ Ավելի հաճախ դիմում էր Թումանյանին։ Բավական հոգնեցինք։ Ահա այդ ժամանակ էլ մոտեցավ մի պատանի և սուաջարկեց բոլոր տուրիստներին մի-մի գավաթ սուրճ խմել։ Սրճամանները փոքրիկ գավաթներ էին՝ զարդարված թանկագին քարերով։

— Պալատում հին ժամանակ աշոպես էին ընդունում օտարերկրյա ներկայացուցիչներին, — նկատում է ալբանացին և հիշեցնում, որ ինքը միշտ էլ «բարի, հին անցյալի» մեծագույն երկրպագուներից է եղել։

Ամբողջ պալատը, թանգարանը, պալատական այգին դիտելուց հետո մեծ պատշգամբը շատ դուրեկան էր. այդտեղ

կային արժուներ, կարելի էր մի քիչ հանգըստանալ, տեսարանն էլ շատ գեղեցիկ էր: Նորից պարեւոյի հետ շատ աշխույժ տոնով գրուցում է Թումանյանը: Այստեղ անակնկալ կերպով հանդես եկաւ ինչ-որ լուսանկարիչ, նկարեց նախ ամերիկացի տուրիստներին և սպա մեզ: Այնքան էլ հաջող չէր փոքր այդ լուսանկարը, չնայած դրան, իսկական Թումանյանը լավ էր գծվել, հատկապես վերջին տարիների Թումանյանը:

Պետք է ասել, որ ինքը՝ Թումանյանը, միշտ էլ գրույցների ժամանակ աշխատում էր ծանրանալ առաջին հերթին գրական խնդիրների վրա: Սակայն 1921-ին հաճախ այնքան համառ կերպով էին առաջադրվում քաղաքական հարցերը, որ կատարելապես անհնարին էր «լուռ ճամփորդի» դիրք գրավել:

Ստամբուլի «Ենի շարգ» թերթի, որքան հիշում եմ այժմ, խմբագրության ներկայացուցիչները գալով Թումանյանի մոտ, խնդրել էին «լուսարանել» առաջին հերթին ժամանակի քաղաքական խնդիրները: Այդ այցելության մասին պատմել է ինձ ինքը՝ բանաստեղծը:

— Աշխատում էի ծանրանալ բացառապես գրական հարցերի վրա, բան

դուրս չէր գալիս: Մարդիկ եկել են մի-
անգամայն լավ նպատակով: Ես նկատե-
ցի, որ դրանց ամենից առաջ հետաքրք-
րում են ազգային հարաբերությունները...

Պատմական թոռացիկ ակնարկ նետե-
լով, Թումանյանը իր հարցազրույցի մեջ
շեշտում է, որ անդրկովկասյան բոլոր
վայրերում սովետական իշխանությունը
ստեղծել է իրական խաղաղություն:

— Սովետական Հայաստանի կառա-
վարությունը, — պատմում է պոետը, —
Մոսկվայից ստացել է մեծագույն նվեր՝
ոսկու վալյուտա. գնել է հաց և այդ հա-
ցապաշարից առանձին բաժին էլ հանձ-
նել է իր կողմից Նախիջևանի շրջանի ա-
դրբեջանցի բնակիչներին: Ի՞նչ խոսք
կարող է լինել այժմյան օրերի ազգային
կոիվների մասին: Սովետական Հայաս-
տանի բոլոր վայրերումն էլ հայ և ադրբ-
բեջանական ժողովուրդները միաձույլ եղ-
բայրական շարքերով անցել են խաղաղ
շինարարության:

— Նոր էջ է բացվում հայ ժողովրդի
պատմության մեջ: Հայ առաջավոր գրող-
ները համոզված են, որ տանկական ին-
տելիգենցիայի առաջավոր ներկայացու-
ցիչներն էլ ամեն կերպ կօժանդակեն ազ-

գությունների բարեկամության մեծ գործին:

Հետագայում, մի երկու օր անցնելուց հետո, ես էլ ծանոթացա Ստամբուլի տանկական թերթի հիշված ներկայացուցիչների հետ: Դրանք պատմեցին ինձ և Թումանյանի մասին: «Ենի շարգ» թերթի խմբագրությունն իր կողմից հատուկ առաջնորդող հոդված էր հրատարակել հատկապես Թումանյանի հարցազրույցի առթիվ:

— Մեզ պատմել են հայ ժողովրդի բանաստեղծի մասին. կարդացել ենք նաև նրա երկերի, հատկանշական հոդվածների թարգմանությունը. տանիկ ժողովրդի համար այդպիսի հյուրերը սիրելի են...

Առանձին ուրախությամբ և գոհունակությամբ են այդ ժառանգիստներն արձագանքում այն հայտարարությանը, որ հայ ժողովուրդը մի անգամ ընդմիշտ կապել է իր բախտը ողորմ ժողովրդի հետ և դեկավորվելու է այսուհետև բացառապես Հոկտեմբերյան մեծ հեղափոխության միջազգայնական և ժողովրդական վսեմ սկզբունքներով:

Լավ հիշում եմ այսօր մի այլ դեպք ևս: Մերթընդներթ ես ճաշում էի Թումանյանի հետ: Ստամբուլի ռուսական ճաշա-

րաններն, իմարկէ, այդ ժամանակ լեցուն
 էին էմիգրանտներով: Հայեր, վրացիներ,
 ադրբեջանցիներ էլ կային դրանց մեջ:
 Նշմարելի տեղ էին բռնում անգլիական,
 ֆրանսիական, իտալական սպաները:
 Էստրադային երգիչներ ու երգչուհիներ էլ
 կային, որոնք երբեմն, որքան էլ այդ
 զարմանալի է, երգում էին նաև ռուս ժո-
 դովրդական երգեր: Ստամբուլյան շատ
 ինքնահատուկ մթնոլորտում նոր ձևով
 էին հնչում ըմբոստաշունչ տրամադրու-
 թյամբ տողորված հին երգերը: Արդևն
 քայքայվում և տարրալուծվում էր ստամ-
 բուլյան էմիգրացիայի որոշ մասը: Ժողո-
 վրդական հայտնի երգերն էլ կարծես
 թելադրում էին նոր հիմնակետից մոտե-
 նալ հեռու Ռուսիայում շարունակվող
 պատմական մեծ պայքարին: Երգը դառ-
 նում էր ավելի նոր և կենդանի: Նույնիսկ
 հին երգերը քրքրում էին այրող վերքերը
 և մերկացնում ռուսական հակահեղափո-
 խության սնանկությունը և պարտությունը:
 Զինվորների խմբերն էլ շատ յուրահա-
 տուկ ձևով էին արձագանքում քաղաքա-
 կան նոր լուրերին: Մի անգամ մենք
 ստիպված եղանք կանգ առնել ավելի մեծ
 խմբի մոտ: Ռուս զինվորները լսում էին
 հարմոնիստ ընկերոջ երգը: Շատ սովո-

րական «գորշ շինեցալոր սաղսաթ» էր դա: Բախական մանուտուն եղանակով երգում էր հայտնի «Յարլոչկա» երգը: Ուշագրավ էին երգի խոսքերը, որոնք սուսնձին հեգնանքով էին ակնարկում ջախջախված ռեակցիայի գործիչների մասին: Հտոները չէին էլ ծածկում իրենց ատելությունը վրանգեղյան սպաների հանդեպ:

Մի երեկո էլ մեզ սուսջարկեցին ուղեփորվել դեպի «Կովկասյան» հաշարան: Թումանյանի պատվին այդտեղ շատ փոքրիկ մի հավաքույթ էին կազմակերպել. հրավիրել էին հասարակական հայտնի երգիծաբան Երվանդ Օտյանին: Ներկա էին և երկու ժողովուրդներ:

Օտյանը եկել էր պոլսահայ մի տիկնոջ հետ: Հանպատրաստից կազմակերպված երեկույթ էր. հաշարանում փոքրիկ մի էսորսոդա կար: Արևելյան երաժշտությունը նվագում էր տաճկական, թաթարական, հայկական եղանակներ: Աչքի էր ընկնում հատկապես երգչուհի Սուրսոյանը:

Երվանդ Օտյանը հստած էր մտախոհ, շատ քիչ էր խոսում, մերթրդումերթ ընդհատում էր բանաստեղծին, կարճ հարցեր տալիս կամ սուսրկում: Սեղանի «հախագահը», իհարկե, Թումանյանն էր:

Սուրաբյանը շնորհալի երգչունի էր. աշխատում էր երգել բանաստեղծի սրտին ու հոգուն մոտ երգեր: Թաուն ու քյամանչան, հաշ ժողովրդական երգերը, ընկերական մտերիմ մթնոլորտը ոգևորել էին Թումանյանին: Նա անչափ ուրախ էր և իր ուրախ կեցվածքով գրավում էր բոլորի ուշադրությունը: Երաժիշտները նվագեցին հայտնի սահարին, ռասուրը, չոբան-բայաթին: Թումանյանն էլ մի շարք գովեստի խոսքեր ասաց թառի ու քյամանչայի ստթիվ վարպետ երաժիշտների հասցեին: Երաժիշտներն էլ այդ ստթիվ երգեցին «Ալջի բախտավորը»: Թումանյանն առաջարկեց խմել բոլոր էստրադային արտիստների կենացը: Դրանք էլ զգացված ու ոգևորված ոտքի ելան և բանաստեղծի կենացը խմեցին:

Օտյանը կարծես դիտում էր միայն: Առաջին նվագն հիշեցնում էր Վոլտերին: Այդ երեկո շատ գուսպ էր. հոգնաբեկ ճամփորդի նման էր: Ինձ գոնե այդպես էր թվում: Ես կարծում էի, թե ինքն էլ կատակներ կանի և երգիծաբանի նման կպատախսանի Թումանյանին: Օտյանը միայն տխուր ժպտում էր, այնինչ մնացած հյուրերն աշխատում էին տխուր Օտյանին էլ ուռախացնել. Թումանյանը

սլատմում էր և սպա ինքն էր առաջինը ծիծաղում, մենք էլ ձայնակցում էինք: Օտ-
յանը լուռ էր մինչև վերջ, թեև սիրալիր
հայացքով հետևում էր սեղանի գլխին
բազմած բանաստեղծին, որ այդ պահին
և՛ մարգարեի, և՛ կապիտանի նման էր:

— Էդպես է, էդպես է, հիմի է մեզ
մոտ ստեղծվում իսկական կյանքը: Դա-
րեր են անցել, դարեր շարունակ հայ ժո-
ղովուրդը երազել է երջանիկ ապագայի
մասին, երազել է ու պայքարել: Ժողովըր
դական հեքիաթների մեջ էլ արտացոլվում
է էդ անցյալը: Միայն «Հազարան բըլ-
բուլն» ի՞նչ արժե: Լավ երգը ժողովրդի
հոգու, սրտի ամենաթանկագին զգացում-
ների լավագույն ցուցանիշն է:

Մեր ժողովրդական երգերի մեջ կա
շատ մեծ միտք. էդ երգերը խոսում են
աշխատանքի, ազնվության, եղբայրության
մասին: Քարքարոտ վայրերում, ժայռերի
և սալառածների երկրում սալրող մեր էդ
ռամիկ ժողովուրդը սքանչելի ավանդու-
թյուններ և հեքիաթներ է կերտել: Է՛ն էլ
է բնորոշ, որ ամենադաժան պայմաննե-
րում էլ ժողովուրդը չի կորցրել իր կամքը:
Երազել է, վազել է «կապույտ թռչունի»
հոսից, շատ ծանր օրեր է քաշել և էլի
հորովել երգելով հոդն է հերկել: Լավ է

դա թե վատ, հիմի դրա մասին չի խոսքը: Բանն էն է, որ մեր ժողովուրդը կեղծավոր բարեկամներ շատ է ունեցել. դրանք հազար ու մեկ խոստումներ են տվել մեզ և միշտ խաբել: Ամենածանր վայրկյանին էլ մենակ են թողել մեզ: Եվ ո՞վ է էդ ծանր ժամին օգնության հասել հայ ժողովրդին, լավ է հայտնի...

Ապա նորից կրկնելով իր պատմությունը կարմիր բանակի մասին, Թումանյանը խնդրում է Սուրաբյանին երգել Ստեփան Ռազինի մասին հորինված ուսու ժողովրդական հայտնի երգը:

— Հիմի ահա ուսու ժողովուրդն է էլի մեծ եղբոր նման հսկում, օգնում և խրախուսում մեզ...

Օտյանը լսում էր ուշադրությամբ:

— Մեծ երկիր է, անչափ մեծ, սակայն միայնակ, երազկոտ և տակավին թույլ,— փորձում է սուարկել նա:

— Ի՞նչ եք ասում: Հզոր երկիր է, և ժողովուրդն էլ երիտասարդ, թարմ և հզոր: Մեր պապերն ու հայրերը միշտ էդ մեծ ժողովրդի բարեկամներն են եղել: Դաժան օրերին հյուսիսից են եկել մեր իսկական բարեկամները: Էն էլ չպիտի մոռանանք, որ այժմ էդ ժողովրդի մեծ ի-

դեպքերը ողջ երկրագնդի առաջաւոր շարքերի լավագույն պատգամներն են:

Կոիւմներ դեռ կլինեն, բայց այսուհետեւ էդ կոիւմները պիտի ուղղվեն մարդասոցության, կոտորածների, պատերազմների բոլոր հեղինակների դէմ: Մեր Հայրենիքում էլ կոիւմը շարունակվում է, բայց էդ կոիւմը հիմի մղվում է սոցիալական դէմ: Մեծ կոիւմ է մղվում բնության կույր ուժերի դէմ: Գիտության կուռ զենքերով զինված հսկ ժողովուրդը օգտագործում է բնության բոլոր ուժերը. ջրանցքներ է կառուցում, դաշտերն է հերկում, լեռներն է փորում: Իսկ ամենից հիմնականն էն է, որ էդ մեծ աշխատանքն էլ միայնակ չի կատարում: Էդ է կարևորը: Էդ է, որ նրան ուժ է տալիս: Դրա համար է հիմի մեր գեղեցիկ լեռներում բարձր հնչում աշխատանքի մեծ երգը...

Օտյանը կարծես համաձայնում էր և նույնիսկ ձայնակցում էր թարմ հովի նըման հնչող առույգ խոսքին: Եկել էր սոված երկրից, «գուլումի աշխարհից» այդ բանաստեղծը. եկել էր «վայրենի» համարվող բոլշևիկների հետո երկրից. եկել էր հարուստ մի քաղաք, կանգնել էր գրեթէ Եվրոպայի շէմքին և ասում էր սուսանց տատանումների.

— Դո՛ւք եք մահացողները... Պատմությունը ձե՛զ է անխուսափելի մահվան դատապարտել, է՛դպես է լինելու: Կյանքն է՛նտեղ է: Լուսավո՛ր է հայ ժողովրդի ուղին: Իսկական մարդիկ, սպազան կերտող մարտիկները մե՛զ մոտ են:

Հանդիսավոր և մարգարեական էր դառնում ժողովրդական բանաստեղծի ինքնաբուխ խոսքերի ջերմ ինտոնացիան:

— Կգա՛ էն օրը, երբ մեծագույն գործարաններ կկառուցվեն լեռնային ու նվիրական մեր հայրենիքի սահմաններում, բազմաթիվ դպրոցներով, ընթերցարաններով, հիվանդանոցներով կլցվի մեր երկիրը, ժողովրդի ամբողջ եռանդը կնվիրվի խաղաղ շինարարության գործին...

— Հեքիաթ է դա, հեքիաթի պես գեղեցիկ երազ: Չէ՞ որ կան ազգային տարածայնություններ, կրոնական բախումներ, ցեղային ընդհարումներ: Իսկ ներհակ ու մրցակից ուժերը, վերջապես դրամատիքական մեծ պետությունների շահերը... Մի՞թե այդ ամենը չի խանգարի ձեզ նման երազողներին...

— Ահա այդ հեքիաթն էլ էսօր մեզ մոտ դառնում է իսկական իրականություն: Ազգային-ցեղական կոիվներին մեզ մոտ վերջ է տրվել: Ավելին: Անդրկովկասյան

692

բոլոր ժողովուրդները միացած են և միասնական ամրակուռ շարքերով կառուցում են նոր հասարակության վեհապահ շենքը: Իհարկե, եղբայրական էդ միությունը կորով և ուժ է ներշնչում ժողովրդին:

1921-ին էր: Այդ օրերին հերոսական աշխատանք էր կատարվում սոցիալիստական մեր մեծ հայրենիքի սահմաններում:

...Երբ դուրս ելանք ռեստորանից, ստիպված էինք քայլել աղտոտ ու քարքարոտ մայթերով: Աղտոտ էր լապտերների լույսը: Օտյանը գրեթե ստամբուլցի էր, ճաշարանների ու սրճարանների մշտական հաճախորդ, ծանոթ միջավայրի մեջ: Բայց նա քայլում էր Թումանյանի կողքից խարխափելով, վարանոտ և անվստահ քայլերով: Բանաստեղծը պատանու էր նրման: Փողոցումն էլ հնչումն ձայնով և ծիծաղելով ինչ-որ «գարմանալի մարդու» մասին էր պատմում: Օտյանը նորից մտախոն էր, աշխատում էր ետ չմնալ և արագացնում էր քայլերը...

Ես կանգ չեմ ստնում Բերայի հայտնի Թոքատլյան հյուրանոցի դահլիճում կապմակերպված հասարակական բանկետի նկարագրության վրա: Լավ չեմ հիշում, այդ երեկո էր, թե դրանից ստաջ, Թումանյանը պատմեց նաև 1905-ի ազգայնա-

կան բախումների մասին: Յարիզմի գործակալներին օժանդակել են նաև իշխող դասակարգերի «ականավոր» ջոջերը: Թումանյանը հաշ-թուրքական կոտորածները կանխելու նպատակով մի խումբ ձիավոր համագյուղացիների հետ միասին Դսեղից ուղևորվում է թուրք «թարաքչամա» քոչվորների մոտ, դիմում է յապանչրում խմբված գյուղացիներին և առաջարկում հաշ գյուղացիների հետ միասին ընդհանուր պայքար մղել ցարական բռնատիրության դեմ: Այդ պատմական ուղևորությունը մեծ տպավորություն է թողնում հայերի և թուրքերի վրա: Բանաստեղծը պատմում է նաև առակներ և սլոխաբանական ձևով բնութագրում ցարիզմի կոկկաչյան ագենտների սքովոկացիոն քաղաքականությունը: Առանձին վայրերում հաճախ հավաքվում էին մի քանի հարյուր շինականներ:

Սովորաբար ինքը՝ Թումանյանը, շատ կարճ էր պատմում այդ ուղևորության մասին: Հետագայում ես նորից թերթեցի դաշնակցության հայտնի դատավարության սենատական գործերը: Մեծադիր և հաստատիր մի հատորի մեջ հատկապես ակնարկած «Էպիգոդի» նկարագրությանը, որքան հիշում եմ, նվիրված են մոտավոր-

րապէս 35 էջեր: Թորք կալվածատերերը, բեգերն ու աղալարները, գյուղաջիւղները և մի ուսուցիչ բալակյան մանրամասն պատմում են Թումանյանի ջանքերով կազմակերպված անչափ ինքնատիպ լեռնային «միտինգների» մասին: Բեգերը և աղալարները հիշեցնում են բննիչին հատկապէս այն, որ Թումանյանը հեղատիոխական ճատեր էր ստում, անհամոքութելի առակներ էր պատմում, ծաղրում էր իշխողներին...

Այսպէս թե այնպէս, սենսատական գործի մեջ տպագրված մանրամասն և շատ անգամ պատկերաւոր «հաշտարարությունները» ցույց են տալիս, որ Թումանյանի պատմական ուղեորությունը մեծ արձագանք ու ցնցում է առաջ բերել լեռնային վայրերում:

Այդ բանկետին ներկա էին մոտավորապէս 35-ի չափ մոտավորականներ, իմիջիալոց, նաև մի քանի դերասանուհիներ, նկարիչներ, բժիշկներ: Առանձին ներքողական ճատեր ստացին Վ. Թեքեյանը, Թուիշյանը, Միսակյանը, որքան հիշում են, նաև նկարիչ Թերլեմեզյանը: Բոլորն էլ ողջունելով Թումանյանին, հաշտարարում են, որ լիովին ձայնակցում են Նրեանի հայ գրողների կոչին: Թուման-

յանն իր պատասխանի մեջ նորից նկարագրեց հաշ ժողովրդի մթին անցյալը, բնութագրեց ուս ժողովրդի կուտորայի հիմնական գծերը և ապա կարմիր բանակի պատմական խոշոր դերը: Անչափ ոգևորված նա ստաջարկեց խմել «նոր կյանքի» և ազատագրված, «նոր վերածնված հաշրենիքի» կենսունակությանը օժանդակող գործիչների կենացը: Որքան էլ «դիվանագիտական» չէր այդ ճառը, բայց բոլոր հանդիսականների համար էլ պարզ էր, որ բանաստեղծը որոշակի ակնարկում է բոլշևիկյան կուսակցության մասին: Անհրաժեշտ է ընդգծել, որ Թոքստյան հյուրանոցում սպրում էին բազմաթիվ ժողովրդականներ, կաշին ճուղնիսկ գինիորականներ: Հյուրանոցի դռների մոտ, նախասենյակում, միշտ կարելի էր երկու կտմ երեք ապա տեսնել: Իհարկե, հետախուզական օրգանների ներկայացուցիչները որսկան շների նման հետևում էին Անդրկովկասից եկած մարդկանց: Այդ քաջ հայտնի էր Թոմսանյանին: Չնայած դրան, իրեն հատուկ տաղանդով և դիվանագիտական տակտով նա կարողանում է դեմիկիկան-վրանգելյան բանակի թափափուկներով լեցուն քաղաքում անգամ շատ որոշ տոն և ուղղություն տալ

260—4

«գրական» բանկետին: Այդտեղ էլ նա առաջարկում է ստեղծել Ստամբուլի Հայ արվեստի տուն և կուլտուրական նոր շարժում կազմակերպել: Այդ առաջարկը միաձայն ընդունվեց, բայց հետագայում ստամբուլյան հայ ինտելիգենցիան գործնական ոչ մի աշխատանք չձեռնարկեց: Միակ նախաձեռնությունը մեծ նկարահանողեսն էր, որը կազմակերպել էր Թիֆլիսից եկած նկարիչ Խաչատրյանը:

— Զարմանալի բան է,— ասում էր Թումանյանը,— Ստամբուլը մեծ քաղաք է, գեղարվեստական հուշարձաններով լեցուն մի քաղաք, մայրաքաղաք է վերջապես: Եվ էդ մայրաքաղաքումն էլ առաջին մեծ նկարահանողեսը կազմակերպում են վերածնված Հայաստանի նկարիչները, և էն էլ էս օրերին, երբ չեն անհետացել մթին հուշերը կոտորածների մասին...

Վերջին անգամ Թումանյանին տեսա Բաթումում: Նոր էր վերադարձել Ստամբուլից և հիվանդ էր: Վերադառնում էր Թիֆլիս: Ավելի էր նիհարել, բայց դարձյալ առույգ էր և կենսուրախ: Լինում են այդպիսի հին և ամուր կաղնիներ: Անցորդներն անդադար կացիններով հարվածներ են հասցնում, անխնա կտրատում

են ճյուղերը, բայց հասնում է գարունը, և նորից կանաչում է հին կաղնին...

— Եթե էս աշունն ու ձմեռն էլ անցնի, նորից ոտքի կելնեմ: Միայն թե կարողանամ շուտ տուն հասնել: Կարոտել եմ. շարունակ մեր տանեցոց մեջին եմ մտածում:

Ապա սկսեց պատմել Ստամբուլի հայ մտավորականների մասին: Ինձ էլ հարցրեց հատկապես Ստամբուլի Հայ արվեստի տան կազմակերպողների մասին: Այս անգամ թերհավատությամբ էր խոսում իր հին ծանոթների մասին էլ:

— Հագիվ թե մի բան դուրս գա դրանից:

Ինձ զարմացրեց այդ: Դեռ մեկ ամիս առաջ բանաստեղծը այն կարծիքին էր, որ Հայ արվեստի տունը Ստամբուլի հայ մտավորականության համար կարող է դառնալ հասարակական աշխատանքի կարևոր գործոն:

— Կուլտուրան էլ պիտի ամուր պատվանդան ունենա: Էդ պատվանդանը հայրենիքն է, հայրենի հողն ու իրականությունը: Միայն հարազատ ժողովրդի միջավայրն է հյութ տալիս արվեստին և գրականությանը: Ա՛յ, քեմալականներն էդ բանը հասկացել են և դրա համար էլ նոր

մայրաքաղաք են կառուցել Անատոլիայում: Թուրքիայի սիրտն է դա: Անցյալում Պոլսումն էլ է եղել հայ կուլտուրա: Բայց էդ էլ եղել է են օրերին, երբ ինքը՝ Պոլսի հայ ինտելիգենցիան, կապված էր գավառների հայ բնակչության հետ: Երբ թուլանում է էդ կապը, խամբում է և հայ գրականությունը...

— Իսկ Պեշիկթաշլյա՞նը. չէ՞ որ նրա պոեզիայի մեջ նշմարելի չէ գավառական շեշտը:

— Չկա էդպիսի շեշտ, թեև Պեշիկթաշլյանի արվեստի խթանողն էլ եղել է գավառի բնակչությունը և թուրքահայ գավառների հետ կապված քաղաքային դեմոկրատիան. էդ բանը լավ էր հասկանում Պարոնյանը...

Հիվանդ էր Թումանյանը, բայց չէր թողնում հեռանալ, անդադար խոսում էր. նորից սլատմում էր հին օրերի և հին ծանոթների մասին: Բանաստեղծին առաջարկել էին ողկորվել Փարիզ, ասել, որ եվրոպական քաղաքներում էլ կունենա ընթերցողներ և մեկենասներ:

— Օտարներ են դրանք ինձ համար, օտար է և ամբողջ շրջապատը: Բարեմից ահա տեսնում եմ մեր լեռները, հեռու Դսեղը, գյուղական անշուք խրճիթները:

...Ամենից լավն էն է, որ էս մեծ օրերին, երբ ապագայի նոր պատմությունն է կերտվում, հաշ ժողովուրդն էլ հին, անիրավ աշխարհի դեմ կռիվող ազատագրական մեծ բանակի անբաժան և հարազատ հատվածներից մեկն է...

1942



ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

(Հովհ. Թումանյան — Երկերի ժողովածու, հատոր երկրորդ. Պոեմներ. 1887—1916. Արմֆանի Հրատարակություն, Երևան, 1940):

Ակադեմիական այդ հրատարակության երկրորդ հատորն անպայման շատ խոշոր գրական նորույթ է: Մեծ բանաստեղծի երկերի առաջին գիտական ժողովածուն է դա՝ կազմված խնամքով և մեծ ուշադրությամբ: Հետագա չորս հատորների մեջ, ըստ խմբագրական ծանուցման, պիտի ամփոփվեն երգերն ու լեզենդները (առաջին հատոր), պատմվածքներն ու հեքիաթները (երրորդ հատոր), հրապարակախոսական հոդվածները և ուսումնա-

սիրությունները (չորրորդ հատոր), մամակները (հինգերորդ հատոր):

Առաջին լանգամ է, որ մենք՝ Թուման-
յանի ընթերցողներս հնարավորություն
ենք ստանում կարդալ և ուսումնասիրել
պոետի երկերի ստուգված տեքստը: Երկ-
րորդ հատորի մեջ ամփոփված նյութերն
անչափ բազմազան են և հարուստ: Բացի
հիմնական տեքստից, այդ հատորի մեջ
մտնում են առանձին երկերի ֆրագմենտ-
ները, զանազան պոեմների վարիանտներ
և հատուկ կոմենտարներ: Վերջին բաժնում
կան բազմաթիվ քաղվածքներ բանաստեղ-
ծի ձեռագրերի հարուստ արխիվից, ուշա-
գրավ փաստական տվյալներ, մատենա-
գրական տեղեկություններ: Այդ խոշոր
աշխատանքը մեծագույն հաջողությամբ
են կատարել Ն. Թումանյանը և Ա. Ին-
ճիկյանը: Կարելի է նույնիսկ ասել, որ
կոմենտատորական այդ աշխատանքը
կրում է միանգամայն ինքնուրույն ուսում-
նասիրության բնույթ, քանի որ առանձին
ակնարկներն էլ, արխիվային նյութերի
մանրակրկիտ տեքստաբանական քննու-
թյունն էլ օժանդակում են Թումանյանի
թե՛ կյանքի և թե՛ ստեղծագործության գի-
տական լուսաբանությանը:

256
956

Թերթելով այդ ստույգ հատորի էջերը, մենք կարող ենք հետևել Թումանյանի ստեղծագործական աշխատանքի ամբողջ պրոցեսին: Դա խիստ հետաքրքրական է: Ձեռագիր վարիանտների մանրակրկիտ հետազոտության միջոցով ամէլի ճշգրիտ գույներով են բնութագրվում պոետի ստեղծագործության անգամ շատ հաշտնի կողմերն ու գծերը: Էլ չեմ ասում, որ նոր նյութերը լուսաբանում են նաև Թումանյանի կյանքի մի քանի էական էջերը:

Կոմենտարներին և տեքստային տարբերություններին խմբագրությունը հատկացրել է երկրորդ հատորի 357-ից մինչև 448 էջը: Բուն տեքստի մեջ մտնում են: Բացի հաշտնի պոեմներից («Մարոն», «Լոռեցի Սարոն», «Անուշ» և այլն), առաջին անգամ հրապարակվող հատվածներ՝ «Հագարան բլրից» պոեմից, Բաշրոնի «Մանֆրետ»-ի առաջին գործողության մի հատվածի թարգմանությունը և մի հատված էլ սերբական «Մարկոն վար է անում» էպոսից: Ձեռագրերի արխիվից հանված էջերն առանձին արժեք են ներկայացնում: Կան վերջապես շատ ուշագրավ ֆրագմենտներ, բազմաթիվ վարիանտներ և հատվածներ էլ, որոնք ժամանակին լույս են տեսել տարբեր թերթե-

րի և հանդեսների մեջ թեև պոետի երկերի ոչ մեկ ժողովածուի մեջ չկան այդ նյութերը: Այդպիսի հատվածներից հշտնակալից են՝ էջեր սերբական էպոսից («Թե ինչ ուղարկեց Թուրքի սուլթանը Մոսկովի ցարի ընծաների փոխարեն», «Մարկոն վերացնում է պսակի հարկը»), մի ֆրագմենտ Շոթա Ռուսթավելու պոեմից («Ռուստևանի և Ավթանդիլի մրցությունը»), մի հատված Բայրոնի պոեմից («Չայլդ Հարոլդ»), «Դեպի անհունը» պոեմը. ապա դրվագներ «Հազարան բլրբուլից» և «Սասունցի Դավիթի» առաջին և երկրորդ մասերից:

Բոլոր նյութերը ոչ միայն արտատրյված են տարբեր հանդեսներից (ինչպես շեշտվեց արդեն, պոետի երկերի ժողովածուների մեջ չկան այդ նյութերը) մեխանիկական կերպով, այլև որոշ սխառեմավորման ենթարկված: Բոլոր երկերին կցված են հսկա Թումանյանի ձեռագրային արխիվից հանված նոր նյութեր: Մանրամասն ծանոթագրությունների մեջ հշտնակալ են տպագիր սոբյորները, տպագրված են Թումանյանի սեփական կոմենտարները, Բայրոնին նվիրված մի բանաստեղծություն, մի հոդված սերբական էպոսի մասին...

Հսկայական նյութը հնարավորություն է տալիս պարզել Թումանյանի վերաբերմունքը դեպի Բայրոնը, ժողովրդական բանահյուսությունը, սերբական էպոսը, գրական հոսանքները և այլն: Նոր նյութերը ցույց են տալիս, որ մեծ պոետը շատ խոշոր և աշխատանք է կատարել. ձգտել է մեծագույն կատարելության հասցընել իր խոսքը. աշխատել է ընտրել ոչ միայն դիպուկ ու պարզ, այլ միաժամանակ պատկերավոր խոսքեր: Զանալով ճշգրիտ կերպով արտահայտել իր հույզերըն ու ապրումները՝ Թումանյանն իր հարուստ արվեստի զենքերն էլ վերցրել է ժողովրդական ստեղծագործության գանձարանից: Ահա ամենահետաքրքրականը հենց ստեղծագործական աշխատանքի այդ պատկերն է, որ նշմարում ենք երկրորդ հատորի մեջ:

Թե որքան մեծ նշանակություն ունի գիտական նոր հրատարակությունը՝ այդ մասին երկու կարծիք չի կարող լինել: Կան աննշան թերություններ, սակայն այդ թերությունները նսեմանում են, երբ ուշադրությամբ թերթում ենք ամբողջ հատորը:

Ընթերցողի ուշադրությունը գրավում են ստաջին հերթին հրապարակվող նոր

նյութերը: Երկրորդ հատորի մեջ տպագրված են իմիջիայլոց շատ հետաքրքրական հատվածներ 1890-ին գրված «Հառաչանք» պոեմից: Այդ պոեմի նյութը, ինչպես շեշտված է ծանոթագրություններում, Դսեղի շրջանում երևան եկած *դաչադնէրի*՝ Չոփուրի տղաների պատմությունն է: Հին օրերին, ցարաւկան բռնակալության դաժան տարիներին, հայ լեռնավայրերումն էլ «աւլագակությունը» շատ անգամ իշխող բռնապետական կարգերի դեմ ուղղված յուրահատուկ սոցիալական մի բռնկում էր: Թումանյանը՝ թերևս որոշ չափով Բայրոնի ազդեցության ներքո՝ աշխատում է իրեն հատուկ ձևով մշակել նոր մի թեմա: Պոեմի սկզբնական տողերի մեջ արդեն մենք նշմարում ենք ուսնչպար ժողովրդի հետ կապված պոեմի դեմքը:

Երբ ծեր գյուղացին տեսնում է արտատվոր քաղաքացուն՝ չի էլ ծածկում իր գայրույթը՝

— Աղա՛, հարցնելը ամոթ չըլինի,

Հրամանդդ ի՞նչ մարդ էս կամ ո՞րտեղից ուր...

Ապա դիմելով միևնույն նոր մարդուն, սկսում է պատմել գյուղական դարդերի մասին.

Աղբառ մարդիկ ենք, մեր ձորերի մեջ
 Անց ենք կացնում մեր սև-սև օրերը.
 Թե որքան ենք զուրկ, որքան ենք
 մենք խեղճ՝
 էդ հաստատ զիտե ինքը—միայն տերը:

Քայց դու էլ խելոք մի մարդ ես գիտուն,
 Քո բարի աշխով տեսնում էս էլի,
 Տկլոր ու սոված էսպես տարին բուն
 Քարի-հողի հետ կոխվ ենք տալի:

Պոեմին կցված է այն հայտնի «Նախերգանքը» (Լեոնե՛ր, ներշնչված դալ՝
 ձյալ ձեզանով...), որը հետագայում ինքը՝
 Թումանյանը, սովորաբար դնում էր իր ժողովածուների սկզբում: «Նախերգանքի»
 մեջ հետաքրքրական ձևով է գծվում Թումանյանի դեմքը: Տեքստային այն տարբերությունները, որ բերված են կոմենտարների մեջ, միայն ավելի կտրուկ կերպով են ընդգծում բանաստեղծի տխուր ապրումները: Երբ այդ տողերից հետո դառնում ենք նորից «Նախերգանքին», կարծես բացվում է պոետի հոգու խոր անկումներից մեկը.

Չե՛զ, ձեզ վերստին, ամպամած լեռներ,
 Կյանքի արխուրյան ամպերի տակից

Ես ձայն եմ տալիս ու ծանրաբախիծ
Հոգուս ձայները ձեզ բերում երվեք...

Նույն 1890-ին Թումանյանը գրում է
իր «Անուշ» պոեմը: Կոմենտարների մեջ
կան ուշագրավ քաղվածքներ Ավ. Իսա-
հակյանի և Թումանյանի հին նամակնե-
րից: Թումանյանը մի քանի անգամ շտկել
է պոեմի առանձին դրվագները. ինչպես
ինքն է ասում՝ «պաշինկա» է արել: Հետա-
գայում նա հանել է պոեմի որոշ տողեր,
շտկել է որոշ հատվածներ, հաճախ նույն
տողը մի քանի անգամ փոփոխել, ուղղել:
Իհարկե մեզ համար այսօր առանձին ար-
ժեք են ներկայացնում այդ փոփոխված
տողերն էլ, ինչպես նաև պոեմի կամքով
միանգամայն հանված հատվածները: Այդ-
օրինակ հատվածներից մեկի մեջ Թու-
մանյանը նկարագրելով տխուր լեռնային
գիշերը և պատմելով, որ լսում է հովվի
«ազդարար-հուժկու» ձայները, տաղանդա-
վոր նկարչին հատուկ գույներով է գծա-
գրում հին յալսաղների պոեզիան.

Իսկ առավոտյան աղմուկը բինի
Հաշոց, բառաշոց, խրթխինչ ու գոչյուն...
Այն քառմ ժխտում զվարք վայրերի
Մանոր է հոգուս ամեն մի հրնչյուն:

Ջա՛ն, ախա՛նք առա, հովիվն է երգում:
Ա՛խ, ձե՛նիդ մատաղ, ա՛յ իգիթ չոբան,
Ապրում է, ապրո՛ւմ այդ ձայնն իմ հոգում,
Այդ ձայնը հուժկու, սառի պահապան:

Կոմենտարների մեջ որոշակի աաված չէ, թե երբ է գրել Թումանյանն այդ տողերը: Գուցե թիֆլիսյան իր սենյակում նա խորունկ մտորումների մեջ սուզված, հայրենի հեռու լեռների կարոտը քաշելու պահին է հենց այդքան օրիգինալ ձևով մշակել հետագայում արխիվ նետված հատվածը: Մեզ համար այդ տողերը շատ թանկ են այսօր: Ինքնաբուխ և սրտալից մի նամակ է գրում կարծես պոետը հայրենի լեռների «իգիթ չոբանին»: Ջանալով մշակել ավելի սեղմ և հատու տողեր՝ Թումանյանը, ինչպես ասացի, չի մտցնում «Անուշի» մեջ նախնական այդ հատվածը: Իհարկե, մենք՝ ընթերցողներս, կարող ենք այսօր վիճել մեծ պոետի հետ: Հիշատակված տողերն այնքան պատկերավոր են, որ իմ կարծիքով կարող են պատվավոր տեղ գրավել հայ պոեզիայի սպառա լիակատար անթուղոգիայի մեջ, բանաստեղծի լավագույն տողերի կողքին: Կոմենտարների մեջ կան ուրիշ այդպիսի կտորներ էլ: Այդօրինակ սևագիր

հատվածների ընթերցանությունը և ուսումնասիրությունը գրեթե միշտ հիշեցնում է մեզ այն համառ. պայքարը, որ մղում էր բանաստեղծը իր նվիրական և ինտիմ զգացումների հետ: Թվում է մերթ, թե աշխատանքի ժամանակ վերհիշելով անցյալի պատանեկան հուշերը, բանաստեղծը նրկարչի նման իր վրձինի թեթև մի հարվածով գծագրում էր սուսանձին էսքիզներ հետագա մշակման համար: Հայտնի է, որ տաղանդավոր նկարիչների այդ նախնական էսքիզները հաճախ նույնչափ խոշոր նշանակություն ունեն, ինչպես նաև մեծ, ավարտված կտավները: Թումանյանի մոտ էլ կան շատ այդպիսի թոռուցիկ էսքիզներ-նկարներ: «Անուշի» 151 տողից հետո, օրինակ, նա հետագա հրատարակության ժամանակ հանել է հետևյալ տողերը.

Կըժերն ուսած դուրս են գալի
Աղջիկները մութ ամպից,
Աղչի, ուրով դու՛ գընացի՛ք
Ո՛ւր է մինը ձեր խմբից:

Առանձին դեպքերում Թումանյանն աշխատում էր ընտրել թե՛ ավելի պարզ և թե՛ ժողովրդի ոճին ավելի մոտ խոս-

քեր: Պոեմի 142 տողից հետո կարդում ենք.

Յարաբ հովցա՞վ, յարաբ անցա՞վ
Անհուն ցավը ջիգյարի...

Կոմենտարներն ուշագրավ փաստ են հաղորդում: Սկզբում Թումանյանը գրել էր— *դուզուն դարդը ջիգյարի*: Կան շատ այդպիսի տողեր՝ համված հետագա տպագրության ժամանակ, բայց և այնպես շատ խիտ, խոսուն և արտահայտիչ խոսքեր.

Ասպն ու ծովեր խառնած իրար
Վեր են ելնում սարից, ձորից.

Պոեմի սկզբնական ձեռագրի 573 և 574 տողերի մեջ եղել են տողեր, որոնք իրենց ժողովրդական կոլորիտով աչքի են ընկնում: Ահա երկու բնորոշ քառյակ Անուշի երգից.

Դըժոխս դառան ևս հանդեր,
Էս դըրախտի պես հանդեր,
Էլ ո՞ւր զընամ, ի՞նչ անեմ
Էս չոլերում ևս անաեր:

Կերբամ լալով մամ կըզամ,
Եվ տանջվելով մամ կըզամ,

Ուր ման եկանք, նրստեցինք,
Քեզ կանչելով ման կըգամ:

Պոեմի 707 տողից հետո կա երկու անտիպ հատված, որոնք կարող են և պիտի ստանձին ուսումնասիրվեն: Այդ հատվածներից նշանակալից են լեոնային գյուղի թնութագրմանը նվիրված տողերը: «Սև ամպի նման կիտված» է կարծես զայրույթով համակված այդ գյուղը: Պոեմի վերջին մասում էլ աչքի է ընկնում ողբալից երգի մի կտոր.

Դե՛ գընաս բարով,
Դե՛ գընաս բարով,
Ես էլ չե՛մ անցնիլ
Քո անցած սարով...

Անսահման վիշտն ու կսկիծը ցուցադրվում են ժողովրդական երգերին հատուկ պարզությամբ: Շատ այդպիսի դրվագներ կան նոր հրատարակության մեջ: Ես կանգ եմ առնում միայն պատահական էջերի և տողերի վրա: Բանաստեղծի հոգեկան ապրումների, ստանձնապես նրա կյանքի սկզբնական շրջանի ուսումնասիրության համար ավելի կարևոր են նախնական երկերը: Լույս են տեսել դրանք հայ ժողովրդի համար շատ ծանր օրերին:

Որպէս ժողովրդի՝ գյուղական դեմոկրատիայի առաջավոր ներկայացուցիչներից մեկը՝ Թումանյանը հաճախ շատ սուր ընդհարումներ է ունեցել սև ու ռեակցիոն բանակի կղերական-ազգայնական մունետիկների հետ: Այդպիսի պայմաններում բանաստեղծի ստեղծագործության մեջ էլ պիտի արտացոլվէին տխուր ու ծանր աւօրյայի արձագանքները:

Երկրորդ հատորի մեջ տպագրված են, իմիջիպէտք, «Դեպի անհունը» պոեմի տարբեր մշակումները: Թվում է, որ այդտեղ բավական որոշ կերպով ընդգծված տխուր խոհերը ինքնակենսագրական հուշեր են: Նման տողեր ցրված են նաև ուրիշ երկերում:

Հովհաննէս Թումանյանը մեծ օպտիմիստ էր, առույգ և կենսուրախ մի բանաստեղծ: Լուսանկարներն էլ հենց այդպէս են պատկերում ժողովրդի հետ կապված երգչի ժպտալից և խոհուն դիմագծերը: Բայց այդ երգիչը կույր չէր և ոչ էլ անհոգի գրող: Նա լավ էր նշմարում շրջապատի բնորոշ երևույթների իսկական բլնույթը, լավ տեսնում էր, որ «տկլոր» ու «սոված» ռանչպարի համար այնքան էլ հեշտ չէ պայքար մղել *քարի-հողի* դէմ: Չէր սիրում պոետը ողբալ և մերկացնել

իր խոր հույզերը: Հաճախ կարծես աշխատում է սքողել սրտի մորմոքը և պուշկինյան մեծ արվեստի կատարելությանը հասնող բարձր երգել հայրենի լեռների, ձորերի, հովիտների պոեզիան: Տաղանդավոր արվեստագետի այդ պոեզիան, սակայն, դառնում է հաճախ դաժան և «սևիրավ» կյանքի դեմ ուղղված զորավոր մի զենք:

Նշանակալից է հենց դրա համար էլ բանաստեղծի անավարտ «Հագարան բոլբուլ» պոեմը: Բանաստեղծն իր ձեռքի տակ ունեցել է 60-ի չափ վարիանտ և շատ լավ ուսումնասիրել է ժողովրդական ստեղծագործության աղբյուրները: Առաջին վարիանտը գրի է առել տակավին 1895-ին: Այդ պոեմից կան երեք տարբեր մշակումներ, մեկը նույնիսկ դրամատիկական: Տպագրվել են առանձին հատվածներ 1914-ին և հետագայում: Բացի հայտնի այդ հատվածներից՝ երկրորդ հատորի մեջ այժմ զետեղված են անտիպ նոր հատվածներ: Ինքը՝ Թումանյանը, խոշոր նշանակություն է տվել իր այդ աշխատանքին: Այդ մասին կան տվյալներ երկրորդ հատորի տեքստին կցված կոմենտարների մեջ: 1899-ին, օրինակ, Թումանյանը Փ. Վարդագարյանին գրած մի նամակում ա-

սում է. «...Հանդգնություն ունեցա գիտնականների հակառակ իմ ունեցած մեկնությունը, միտքը նկատել հեքիաթի մեջ և այն զարգացնել ու երգել: Ինչպես դու գիտես, իմ կարծիքով, բանաստեղծության ու մուզիկայի ծնունդն է հեքիաթի առարկան»: Հետագայում, արդեն 1912-ին, Թիֆլիսի Հայոց երաժշտական ընկերության նախաձեռնողներին ուղղված մի գրության մեջ նա ասում է. «...Դուք գիտեք, որ ես շատ եմ սիրում հին խոսքը: Եվ ահա մի հին գրույց, որ սիրել եմ առանձնապես, էսպես է ասում: Պատահեց, ասում է, որ մի ժամանակ գազան դարձավ քնքուշ ու բանական մարդը: Ինչ արինչարին՝ հնար չեղավ գազանը նորից մարդ դարձնելու: Վերջը հայտնվեց, որ հնարը միայն կրգը-երաժշտությունն է...»:

Թե որչափ ճիշտ է այդ մեկնությունը՝ կարող են, իհարկե, վիճել գիտուն-ֆոլկլորագետները: Թումանյանն իրավացի էր: Հայ ժողովուրդը և արևելյան ուրիշ ժողովուրդներ էլ սիրում են պատմել չար ավազակի անողոր սիրտը մեղմացնող երգչի արտասովոր զորության մասին: Կան շատ հեքիաթանման պատմություններ այդպիսի ավազակների և երգիչների մասին: Թումանյանի «Հազարան բըլ-

բուլ»-ի, հատկապես նախնական և անտիպ
հատվածների մեջ երևում է անցած, հիմ
և տխուր օրերի սրձագանքը:

Եվ մարդիկ էլ ծիծաղում են,
քե ինչպես եմ երգում ես ձայնով—
Ու իջնում եմ ես հուսահատ
ու կարոտից խելագար,

Լալիս, հեծում, կուրծքս կոծում,
տանջվում անհույս ու տրկար,
Տանջվում էսպես ու երազում,
ու երազում...

Ավելի հետաքրքրական են կոմեն-
տարների մեջ բերված տարբեր տողերի
զանազան վարիանտները: Ծառ անգամ
բանաստեղծը փոխում է միայն մի խոս-
քը մի քանի անգամ՝ ջանալով ընդգծել
իր միտքը: Հաճախ առանձին այդ տողե-
րը գրված են արևելյան հումանիստ պոեզի-
աների սեղմ ոճով՝ իմաստասիրական աֆո-
րիզմների նման: Ահա օրինակ միայն մի
քանի տող.

Մենք սողում ենք, անց ենք կենում
այս աշխարհից, որպես գետ...

Սնդարձ է աշխարհում ամեն բան,

Ինչ որ գնաց էլ ետ չի գալ հավիտյան...

Ետ կաց սրդի, ինչո՞ւ ետ ետ

մահի ետև ման գալի...

Այդպիսի տողեր շատ կան: Շատ հարուստ մի գանձարան է պոետի ձեռագրային ժառանգությունը: Մի երկու խոսք էլ հատորի մեջ հրապարակված թարգմանական նյութերի մասին: Թումանյանը, ինչպես հայտնի է, միայն իր սրտին մոտ պոետներին էր թարգմանում: Առանձին ուշադրություն է նա հատկացնում Բայրոնին, որի երկերից թարգմանել է «Շիլիոնի կալանավորը», «Մանֆրեդի» մի հատվածը, «Չայդ Հարոլդի» հայտնի «Երգը» և սույա «Ինեսային» դրվագը: Բայրոնը Թումանյանի համար ոչ այնքան «համաշխարհային վշտի» պոետ էր, որքան *բողոքի և ըմբոստացման* երգիչ: Այդպես են մոտեցել մեծ անգլիական պոետին ազգային-ազատագրական շարժումների ներկայացուցիչներից շատ-շատերը: Այդպես է նաև Թումանյանի մոտեցումը: Առանձին տեղ են գրավում Թումանյանի թարգմանական գործերի մեջ ժողովրդական էպոսի դրվագները: Ռուսական բիլինաներից և սույա սերբական էպոսից նա ընտրում է միայն որոշ հատվածներ և այդ դրվագներն էլ թարգմանում է իրեն հա-

տուկ ուժով: Հայ ժողովրդի պոետի սըր-
տին մոտ են Իլիա Մուրումեցի խոսքերը:
Նա աշխատում է ընդգծել ուսական հին
բիլինաների յուրահատուկ կոլորիտն ու
ոճը: Շատ նշանակալից էր այն, որ Լոնգ-
ֆելլոն նեգրերի ազատության երգիչն է
եղել: Այդպես էր արդեն Թումանյանը:
Նա շատ սիրում էր գեղարվեստը: Շատ
հաստապահանջ էր: Բայց և այնպես նա
կյանքից կտրված արվեստի երկրպագու-
ներից չէր: Միշտ կառչած ժողովրդական
կոռ զանգվածներին, միշտ համակված
հումանիտական և ինտերնացիոնալիս-
տական հայեցությամբ՝ նա սիրում էր ժո-
ղովրդի պոեզիան և ժողովրդի ազատու-
թյան նվիրված երգիչներին: Երկրորդ հա-
տորի մեջ ամփոփված նոր նյութերը չա-
փազանց կտրուկ կերպով են նկարագծում
մեզ՝ ընթերցողներին, վաղուց հայտնի ժո-
ղովրդական մեծ բանաստեղծի հմայիչ
դեմքի հատկանշական կողմերը: Թուման-
յանի երկերի խմբագրական հանձնաժո-
ղովը, և հատկապես Ն. Թումանյանը և Ա.
Ինճիկյանը շատ խոշոր և արժեքավոր
գործ են կատարել: Մի քիչ տհաճ տալա-
վորություն է թողնում միայն շքեղ կազմի
անհաշակ պորտրե-սիլուետը:

ԲԱՅՐՈՆ ԵՎ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Բայրոնը խոշոր ազդեցություն է թողել Հովհաննես Թումանյանի վրա: Հայտնի է, որ «Շիլիոնի կալանավորի» հայերեն թարգմանությունը լույս է տեսել առանձին հրատարակությամբ, 1896-ին: Այդ հրատարակությանը կցված ինքնուրույն ձոնի մեջ Թումանյանը էնտուզիաստ-պատանու նման է խոսում մեծ պոետի մասին: «Հրակա պոետը,— ասում է նա,— իր հանճարեղ արվեստը դարձրել է «գեոքոջան վիշտը» քաղցրացնող միջոց»: Նշանակալից են այդ ձոնի մեջ հատկապես հետևյալ տողերը.

Ի՞նչպես դարձրել էս բանտը հայրենիք
Եվ ողջ աշխարհը լայնաբձակ մի բանտ...

Ահա տանջանքի աշխարհում բնիկ,
Մեծարում են քեզ որդիք հիվանդ...

Տակավին 1894-ին Թումանյանը թարգմանել է «Չայդ Հարոլդի» հայտնի «Հրաժեշտը»: Թերևս հենց այդ տարիներին էլ նա թարգմանել է նաև «Մանֆրեդի» առաջին գործողության առաջին տեսարանի մի դրվագը: Վերջերս հրապարակված ակադեմիական ժողովածուի երկրորդ հատորի մեջ հատուկ ծանոթություն չկա այդ թարգմանության իսկական տարեթվի մասին: Կոմենտարիաների մեջ Ն. Թումանյանը և Ա. Ինճիկյանը շեշտում են, որ հենց 1894 թ. շրջանն էլ եղել է Թումանյանի ստեղծագործական կյանքում «քաշրոնական շրջան»: Անհրաժեշտ է, թվում է ինձ, միայն ավելացնել, որ Թումանյանի այդ «բայրոնիզմը» եղել է բավական ուրույն բայրոնիզմ: Հայ ժողովրդի մեծ բանաստեղծի համար Բայրոնը եղել է ոչ այնքան «համաշխարհային վշտի», որքան բողոքի և ըմբոստության երգիչ: Այդպես են մոտեցել ժամանակին նաև իտալական, հույն, բոլոր ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների ներկայացուցիչները: Տրադիցիոն «բայրոնիզմը», որ մեծ պոետի մահից հետո նրա

արվեստի իրական բնույթը աղճատողների ջանքերով ձևակերպվել է որպես *հոռետեսության իմաստասիրություն*, անհարազատ է եղել հիշյալ ներկայացուցիչներին: Բայրոնական ոտմանոտիկական հերոսները՝ ճնշված ժողովուրդների համար միշտ էլ ունեցել են *սուսնձին* նշանակություն:

Թումանյանն էլ սիրում էր սուաջին հերթին հենց հին աշխարհի դեմ ծառայող, ազատության երգը երգող՝ «Չայդ Հարովդի», «Կայենի» մեծ հեղինակին: Բայրոնի անհատական վշտի մեջ նա նրշմարում էր «լայնարձակ», բանտի դեմ կռվի էլնողի դեմքը: Դրա համար էլ Բայրոնը միշտ մնում է Թումանյանի համար ամենասիրելի պոետներից մեկը: Պատահականությամբ չի կարելի բացատրել այն, որ անգամ շատ վաղ ձեռնարկված իր մի թարգմանությունը («Ինեսին») նա տպագրության է հանձնում բավական ուշ՝ 1908-ին: Ես էլ չեմ խոսում այն մասին, որ Թումանյանի ինքնուրույն երկերի մեջ նշմարելի են բայրոնական պոեզիայի ազդեցության հետքերը: «Հառաչանք», «Հաղարան բլրբուլ» և «Դեպի անհունը» պոեմների մշակումների մեջ հնչում են նաև բայրոնական մոտիվներ: Ծառ ուշագրավ են նրա թոուցիկ ափորիզմները նույնպես:

Բոլոր նման տողերի մեջ կարելի է տեսնել պոետի տխուր ապրումների արձագանքը: Հին օրերի մթին և դաժան իրականության մոայլ ապստոների դեմ Թումանյանը մղել է ուժեղ պայքար: Հաճախ նա գրեթե միայնակ է մղել այդ կռիվը բազմաթիվ թշնամիների դեմ: Թե որքան դժվարին է եղել պոետի կացությունը, այդ մասին կան որոշ ակնարկներ «Պոետն ու Մուսան» սատիրական պոեմի մեջ: Բնական է միանգամայն, որ պայքարի ամենածանր մոմենտներին Թումանյանը ակամայից պիտի հիշեր իր սիրելի բանաստեղծին: Ակադեմիական նոր հրատարակության երկրորդ հատորի մեջ կան, օրինակ, այսպիսի տողեր.

Թոչնոց դալալը, ուրախ ծլվլոցը
Սաստկացնում էին սրտիս կսկիծը,
Եվ բվում էր, քե բոլորն աշխարհում
Ինձ ճաղրում էին կամ արհամարհում.

Այս ժամանակ ես մինչև անգամ
Լսեցի մարդկային մի բռնիչ (անզգամ)
Որ անցնում էր մեր մոտիկ փողոցով,
Վիշտս ծաղրելով լիրբ հայհոյանքով...

Մեծ բանաստեղծի ձեռագրերի մեջ կարելի է գտնել ուրիշ այդպիսի ակնարկներ էլ: Ինքը՝ Թումանյանը, հետագայում

արխիվ է նետում այդօրինակ սևագրությունները: Բայց մեզ համար դրանք կարևոր հոգեբանական վավերագրեր են: Անհրաժեշտ է այստեղ նշել, որ Թումանյանի թարգմանություններն ազատ թարգմանություններ են: Ինչպես երևում է, Թումանյանն իր ձեռքի տակ է ունեցել մի կողմից՝ բայրոնական երկերի *տառացի* թարգմանությունը և ուստի մի շարք գրողների թարգմանությունները մյուս կողմից: Սովորաբար նա համեմատել է տարբեր թարգմանությունները և իր առանձին ելակետերից էլնելով՝ հաճախ շատ ազատ թարգմանել Բայրոնի այս կամ այն դրվագը: Ահա թե ինչու՝ այդ դրվագները ոչ այնքան թարգմանություններ են, որքան «իմքնություն» երկեր: Կարելի է, իհարկե, վիճել նման մեկնության դեմ: Բայց փաստը այն է, որ անցյալում շատ-շատերըն էին այդպես վարվում:

Բայրոնի ուսերեն մի հին հրատարակության առաջին հատորի վերջին մասում տպագրված են այդօրինակ հին թարգմանություններից բնորոշ հատվածներ: «Չայլդ Հարոլդի» հայտնի «Հրաժեշտը», օրինակ, թարգմանել են հեռու անցյալում մի քանի պոետներ, իմիջիայլոց, Կոզլովը և Միխայլովը: Կոզլովի թարգմանությունը

գրեթե փոխադրություն է և ինքնուրույն ստեղծագործություն: Լույս է տեսել «Հյուսիսային ծաղիկներ» ավանախի մեջ և հետագայում երգվել, որպես ժողովրդական երգ: Քաղսքային չքավորության և բանվորների համար դա եղել է ամենասիրելի երգերից մեկը: Հիշյալ ավանախում աշխատակցել են, ինչպես հայտնի է, դեկաբրիստներին մոտ կանգնած գրողներ: Կոզլովի թարգմանությունը լույս է տեսել հենց 1825-ին: Բայրոնի հերոսի խոսքերը, իհարկե, ազատատենչ մտավորականների շրջանում, մեկնաբանվում էին ուրույն իմաստով:

Միխայլովը ռուս արմատական ինտելիգենցիայի ներկայացուցիչներից մեկն էր: Պոետ-աքսորականի թարգմանությունը դարձյալ լույս է տեսնում ազատատենչ ընթերցողների օրգանի՝ «Սովրեմեննիկ»-ի մեջ, 1860-ին:

Այդպիսով, բացահայտ տենդենցիայից զուրկ լիբիկական տողերն էլ մեկնաբանվում են առանձին իմաստով: Քսանական թվականների դեկաբրիստները, վաթսուևական թվականների արմատական դեմոկրատները, հետագայում աշխատավոր լայն զանգվածները գտնում էին, որ իր հայրե-

նիքից հեռացող պոետը բողոքում է «բանտ-աշխարհի» դեմ:

Թումանյանը, ինչպես տեսանք, հենց այդ էլ ընդգծում է որոշակի կերպով: Ինքնատուգական թվականներին միայն Թումանյանը չէր այդպես խորհում: Բայրոնի կյանքը, նրա ունեցությունն աշխատանքն Իտալիայում, կապը հունական ունեցությունների հետ, մահը՝ Միսսոլոնգիում հրակայական ազդեցություն պիտի թողնեին առաջավոր հայ գրողների վրա: Բայրոնի երկերի կերպարները հասկանալի և հարազատ էին: Լեոնային-ռոմանտիկական պեյզաժի գեղեցիկ ֆոնի վրա գծված ըմբոստների դեմքերը կարծես հիշեցնում էին հայ լեոնցիներին սուլթանական և ցարական բռնակալության դեմ կռվի ելնող գյուղացի-պարտիզանների: Այդպես էին մեկնաբանվում բայրոնական տիպերը: Մեծ պոետը հայ ընթերցողների համար հումանիզմի և ազատության երգիչ էր, հեռավորարևելյան ժողովուրդների ազատագրական շարժման առաջին մոնետիկը: Ահա թե ինչու Թումանյանի պոեզիայի մեջ բայրոնական մոտիվները արձարծվում են շատ հաճախ, թեև միշտ ունեն յուրահատուկ կոլորիտ և երանգավորում: Նրա թարգմանած «Շիլլոնի կա-

լանաւորը» դառնում է ամենասիրելի գրքերից մէկը: Պոետի հերոսը միայն Շիլիոնի կալանաւորը չէր հաշ ընթերցողների համար: Այդ կալանաւորը խոշտանգված և բանտարկված ուղղուցիւններնեին հիշեցնում էր ուրիշ բազմաթիւ կալանաւորների մասին:

Զայդ Հարովի «Հրաժեշտն» էլ հեռու օրերի հաշ ընթերցողները մեկնաբանում էին ճիշտ դեկաբրիստների, վաթսունական թվականների ոռւ «նիհիլիստների» ճրման: Անհատական և հասարակական ապրումների մի միասնական ձուլվածք կար այդտեղ, որ հասկանալի էր անգամ հետագա պատմաշրջանի բանվոր ժողովրդի սոաջաւոր գնդերի համար:

Վերջերս հրապարակած իր մի աշխատության մեջ հայտնի բանասեր Պիլսանովը կանգ առնելով Մաքսիմ Գորկու ճախնական բանաստեղծությունների վրա, գտնում է, որ Գորկու համար էլ Բայրոնը եղել է սիրելի երգիչ: Գորկին գրել է նույնիսկ Զայդ Հարովի «Հրաժեշտի» ազդեցության ներքո մի բանաստեղծություն, որի կառուցվածքը գրեթե չի տարբերվում «Հրաժեշտի» սոաջին տողերից: Ամենից կարևորը այն է, սակայն, որ Գորկին մի քանի անգամ մշակել է այդ տողերը:

642

1895-ին նա տպագրում է Սամարայում մի բանաստեղծություն, որի առաջին տողերն առանձնապես կրում են «բայրոնական» կնիք: Ահա այդ տողերը՝

Прощай. Душа тоской полна...
Я вновь, как прежде одиноко,
И снова жизнь моя темна,
Прощай, мой ясный огонек.

(Пиксанов, стр. 81)

Հետագայում, արդեն 1905-ին, նա մտցնում է իր մի պատմվածքի մեջ նոր մի վարիանտ: Պիկսանովի գրքի մեջ տպագրված է նաև Գորկու չհրապարակված մի բանաստեղծությունը (այդ տեքստը գտել է Բալուխատին) միանգամայն նոր վերջաբանով՝

Пусть волна грозит бедою,
Море гнев свой усмирн.
Я отважною душою
Чую проблески зари.

(стр. 82).

Այդ տողերը ավելի ևս պարզ կերպով են ցույց տալիս, որ «Հրամեշտը» Գորկու համար եղել է շատ սիրելի մի դրվագ: Կասկածից դուրս է, որ Թումանյանն էլ իր

թարգմանության միջոցով ջանացել է արտահայտել սեփական մտորումները: Երբ մենք այժմ կարդում ենք նոր հրատարակության մեջ տպագրված «Ինեսին» հատվածի թարգմանության չորս վարիանտները, նշմարում ենք բավական որոշակի կերպով Բայրոնի հոգեկան ապրումներն ուսումնասիրող շատ ուշադիր պոետի դեմքը: Թումանյանի համար հասկանալի էր ամբողջ Բայրոնը իր հատկանշական բոլոր կողմերով: Նույնիսկ տխուր լիրիկայի հնչյունների մեջ նա լսում էր ըմբոստ մեծ բանաստեղծի ձայնը: Անհատական հուշերի և թոռացիկ պատկերների մեջ էլ նա տեսնում էր հին օրերի բռնակալների կարգերը խարազանող պրոտեստանտին: Դա շատ ուրույն մի մոտեցում էր: Ծիշտ աշդպես են մոտեցել ժամանակին բայրոնական պոեզիային հին Արևմուտքի «Սըրբազան միության» դեմ պայքարող ազգային ազատագրական շարժումների ներկայացուցիչները: Այդպես է մեկնաբանվել բայրոնական պոեզիան մեր իրականության մեջ էլ: Առաջավոր հայ գրողների համար, համեմայն դեպս, մեծ պոետի վիշտն ու բուլոքը կրել են կոնկրետ իմաստ, հիշեցրել են անդադար «հողեղեն աշխարհի» կենդանի պրոբլեմների մասին:

Այժմ մեզ հայտնի է Թումանյանի մի հին պոեմի սկիզբը (Մի անհայտ պոեմի սկիզբը, հ. 2, էջ 263), ուր նա բնութագրում է իր արվեստը.

Ես վայր եմ իջնում Հայոց լեռներից,
Գալիս եմ ինձ հետ հովիվն ու հովեր.

Ես ձայն եմ տալիս Հայոց դաշտերից,
Լալիս եմ ինձ հետ գեղջուկն,

Իր ցավեր...

Իհարկե, այդտեղ ավելի ընդգծված է «տեղական» ֆոնը: Ավելի որոշ է և պոետի խոսքն ու պատգամը: Լեռնային ձորերի և հովիտների գյուղական դեմոկրատիայի երգչին ենք մենք տեսնում: Այդպես էր իսկական Թումանյանը: Համաշխարհային պոեզիային էլ նա մոտենում է միշտ իր սեփական դիրքերից: Բնական է, որ Բայրոնը նրա համար չէր կարող լինել «համաշխարհային վշտի» վերացական պոետ: Զարմանալի չէ, դրանից հետո, որ բայրոնական երգերն էլ դառնում են կենդանի երգեր՝ շատ մոտ ու հարազատ անգամ «գեղջուկ» ժողովրդի «ցավերն» երգող պոետի սրտին ու հոգուն:

Շատ թոռուցիկ կերպով եմ միայն ես կանգ առնում բանաստեղծի ստեղծագործության այդ կողմի վրա: Իմ նպատակն

էր ընդգծել, որ հայկական այդ «քայրո-
նիզմը» պիտի լուսաբանվի ավելի մանրու-
մասն: Առայժմ կարելի է միայն ասել, որ
Թումանյանի ոչ միայն թարգմանություն-
ները, այլև մի շարք ինքնուրույն երկեր,
գուցե և նամակներ, պետք է այսուհետև
ուսումնասիրվեն առանձին ուշադրու-
թյամբ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հովհ. Թումանյանի ստեղծագործության մեջ նշանակալից տեղ են գրավում հայրենասիրական դրվագները: Շատ սերտ էր կապված նա հայրենի իրականության հետ և, որպես ժողովրդական պոետ, իմարկե, պիտի արձագանքեր հարազատ զանգվածների հայրենասիրական ապրումներին և մտորումներին: Մի հանգամանք, սակայն, գրավում է մեր ուշադրությունը, երբ հետևում ենք պոետի խոհերին: Դա նրա հայրենասիրության ուրույն բնույթն է: Հայ ժողովրդի պատմական հերոսների վրա Թումանյանը գրեթե կանգ չի առնում: Անցյալի հերոսական շարժումների մասին նա խոսք չի ասում, թեև ստանձին զգացումով է պատմում հայ ժողովրդական էպոսի նվիրական հերոսը՝

Սասունցի Դավթի կյանքի մասին: Հմայիչ դեմքեր են նրա համար ժողովրդական ավանդությունների մեջ երգված հսկաները, իգիթները, հին-հին քաջերը: Հայրենի լեռների մեջ բանաստեղծը տեսնում է ավելի հաճախ այդ հերոսներին: Դրանց սովերները և ապա հայրենի բնաշխարհի գեղեցիկ վայրերն են ոգևորում նրան: Այդ վայրերի պատկերներն են դառնում նրա բանաստեղծությունների մեջ հայրենասիրական հուշեր և պատգամներ:

Թե ինչո՞ւ է Թումանյանը այդպես մոտեցել հայրենասիրական մոտիվներին՝ դժվար է բացատրել: Բանաստեղծի վրա որոշ ազդեցություն են թողել գյուղական շրջապատն ու ուսնչապար ժողովրդի մտայնությունը: Գուցե հենց այդ հարազատ միջավայրն է թելադրել նրան երկրագործ-աշխատավորների տեսանկյունից մոտենալ հայրենիքի և հայրենասիրության մոտիվներին: Կարելի է այլ ենթադրություն էլ անել: Անչափ խոհուն պոետի ու պարզ խոսքի նրբին վարպետի համար թերևս արվեստական են եղել ոչ միայն անցյալում ստեղծված փքուն ու վերամբարձ երգերը, այլ նաև Ալիշանի ու Պեշկեթաշլուսանի նման բանաստեղծների երգերի պարետիկական շեշտերն ու երանգները: Ակ-

ներև է միայն մի բան: Հովհ. Թումանյանի հայրենասիրական պոեզիան ոչ միայն ինքնատիպ է, այլև նրբագույն կերպով երանգավորված՝ ինտիմ հուշերի պատկերների շրջանակով:

Ահա թե ինչու այդ պոեզիան նույնիսկ այսօր մեծագույն տպավորություն է թողնում ընթերցողների վրա: Հայ լեռնաշխարհի ամեն մի գյուղ ստիպում է մեզ նորից ու նորից հիշել Թումանյանի պոեմները: Այրումից, Սանահինից սկսած, Ջուրագետի միգապատ լեռների մոտ տեսնում ենք մեծ ժողովրդական երգչի ստվերը և լսում նրա խոսքերը՝

Կանչում է կրկին, կանչում անդադար,
էն չըմնաղ երկրի կարոտը անհուն,
Ու, քեռն՝ անա փրոած տիւրաբար,
Թրուչում է հոգիս, քրուչում դեպի տուն,

Ուր որ հայրենի օջախի առաջ
Վաղո՜ւց կարոտով բապատում են ինձ
Ու ձրմուսն երկար գիշերը նրստած՝
Խոսում են Լոովա հին-հին փաշերից:

Վերացական և մշուշապատ խոսքեր չի սիրում բանաստեղծը: Հայրենիքն ահա այդ ամբողջ լեռնաշխարհն է՝ Լոռու ձորը, մութ անձաւլները, աղոթող վանքը կամ ժայռի

գլխին հսկող բերդը, կծերն ուսած և ջուրն իջած աղջիկները, պաղ աղբյուրն ու գրընգուն երգերը, կյանքն ու աշխատանքը, սերն ու պայքարը...

Տեղական կոլորիտը ցայտուն կերպով գծված է Թումանյանի բոլոր հայրենասիրական ֆրագմենտների մեջ և ահա հենց այդ կոլորիտն էլ անչափ հմայիչ տոն է հաղորդում բարձր հումանիստական հայեցողությամբ համակված նրա երգերին: Անվերջ նվիրական երգի նուրբ հնչյունների նման մնում են մեր հիշողության մեջ նրբագեղ պատկերները և սրտաբուխ խոսքերը: Հայրենիքի կարոտն ու սերը շատ որոշ և ուժեղ են պոետի երգերի մեջ: Դա ազգայնական հայեցողությունից ազատ մի հայրենասիրություն է: Ազգային-հայրենասիրական մոտիվներն արտահայտված են անչափ նուրբ տոնով և միշտ շաղկապված են ժողովուրդների մեծ եղբայրության մասին երազող պոետի բարձր հումանիստական հայեցողության հետ: Հովհ. Թումանյանն առաջիններից մեկն է հայ գրագետների շարքերում, որ առանձին ուժով և անդադար հիշեցնում է իր ընթերցողներին հատկապես ժողովուրդների եղբայրության ունույնցիոն նշանա-

կությունը: Ամենից ուշագրավն այն է, որ Թումանյանի բոլոր երկերի մեջ հայրենասիրության մոտիվն ամենասերտ կերպով ձուլված է ժողովուրդների եղբայրության դրվատմանը հատկացված յուրահատուկ իմաստասիրության հետ: Ժողովրդի ազատության մասին երազող բանաստեղծի համար երջանիկ և հեռու ապագան պիտի լիներ ոչ միայն հիմնովին ազատագրված, նաև եղբայրական կապերով միմյանց հետ ձուլված ժողովուրդների ապագան: Ահա դրա համար էլ նա երբեք չի սահմանափակվում անհատական լիրիկայի մոտիվներով: Սոցիալական բողոքի շեշտն ուժեղ է նրա երգերի մեջ: Մեծագույն զայրույթով և ատելությամբ ակնարկելով ժողովրդի թշնամիների մասին, Թումանյանը վրճահական կերպով դատաւիտում է բռնակալ-դեսպոտներին ու դրանց սպասավորող ստոր մարդկանց: Ծատ կտրուկ կերպով է շեշտվում հատկապես այդ գիծը, այնքան կտրուկ, որ հաճախ դառնում է նույնիսկ յուրահատուկ «տենդենց»: Բայց և այնպես ոչ ոք, անգամ անաղարտ էսթետիկայի սկզբունքներին կառչած քննադատներից որևէ մեկը, չէր վստահանում ու չէր վրդտահանա որևէ մեղադրանք նետել այդ տենդենցի ստթիվ: Բաղաբացիական բո-

ղոթի շեշտն ակներև էր և տենդենցն էլ պարզ: Այնուամենայնիվ «անկոիվ ապրումների» անգուսպ երկրպագումներին անգամ Թումանյանի ակնարկված երգերը հմայում են: Անշափ անկեղծ էր պոետի խոսքը, շատ բարձր էր երգերի արվեստը, ազդու էր նրա ամբողջ իմաստասիրությունը: Ժողովրդի ձայնը, ինտիմ հույզերն ու ապրումները հնչում էին որոշակի կերպով մեծ պոետի բանաստեղծությունների մեջ: Թումանյանը շատ բարձր կուլտուրայով զինված և բազմերանգ համաշխարհային մշակույթին կառչած ժողովրդական երգիչ-տրիբուն էր: Նույնիսկ թարգմանությունների մեջ մենք տեսնում ենք այդ երգչի դեմքը: Մի՞թե պատահական կարելի է համարել Թումանյանի առանձին վերաբերմունքը Բայրոնի, Պուշկինի, Լերմոնտովի և նման այլ գրողների նկատմամբ: Ռուսական հին բիլինային էպոսին էլ նա մոտենում է իրեն հատուկ եղանակով: Թարգմանելով Իլյա Մուրոմեցին նվիրված երգի մի հատվածը, Թումանյանը հիշեցնում է ընթերցողներին, որ ռուս ժողովրդի էպիկական հերոսը նույնպես կոիվ է մղել իշխանների ու հարուստների դեմ: Երբ կովկասյան իրականության մեջ ուժեղանում են ազգայնական

ռեակցիոն հոսանքները, Թումանյանը մե-
 ծագույն եռանդով կռիւի է ելնում ազգայ-
 նական-շովինիստական գործիչների դէմ:
 Նրա հռովածներն ու բազմաթիւ ասույթ-
 ները հայտնի են: Լոնգֆելլոյի մեծատա-
 ղանդ պոեմի՝ «Հայավարի երգի» նախեր-
 գանքի թարգմանությունը առաջին անգամ
 լույս է տեսել 1907 թ., արդէն ուռնացող
 ռեակցիայի օրերին, երբ դժվար էր ավելի
 կտրուկ կերպով լեզաւ մամուլի էջերում
 մերկացնել ռեակցիայի սև ասպետներին:
 Եւ ահա թարգմանելով Լոնգֆելլոյի պոե-
 մի նախերգանքը, Թումանյանը իրակա-
 նում կոթնած Լոնգֆելլոյին՝ դատաւիտում
 է կովկասյան ազգայնականներին: Անց-
 նում է մի տարի, նորից ուժեղացած
 ռեակցիան գետնում է կովկասյան ժողո-
 վուրդների դէմ և նորից Թումանյանը
 թարգմանության միջոցով է արձագան-
 քում ժողովրդի ձայնին: Այս անգամ
 (1908 թ.) երգիչը թելադրում է հանդէս
 գալ Իլյա Մուրոմեցին, և ուսական էպո-
 սի հերոսը դառնում է ըմբոստ ու բողո-
 քող ժողովրդի կենդանի պատգամախո-
 սը...

Այդպէս էր թարգմանիչ Թումանյանը:
 Թարգմանությունը ստեղծագործական աշ-
 խատանք էր:

856

Խոսքը երգչի համար սուր էր և այդ սուրը նա աշխատում էր պատշանից հանել ժամանակին: Իսկ երբ հանում էր իր սուրը պատշանից, լուսնից տատանումների նետվում էր ժողովրդի թշնամիների դեմ: Նրա պոետական աշխատանքն էլ այդպիսի մոմենտներին դառնում էր ապագայի համար մարտնչողների, մեծ ազատագրական շարժմանն օժանդակող կարևորագույն խթան: Ինքը՝ երգիչը, համոզված էր, որ կարող է կատարել և պիտի կատարի այդպիսի դեր:

Մեծագույն էնտուզիազմով ողջունելով կոպկասյան ժողովուրդներին ազատագրող մեր կարմիր բանակի առաջին մարտիկներին, նա վճռական կերպով խարազանում է ազգայնական բախումների հեղինակներին, ներքող է ձոնում նոր՝ սոցիալիստական կարգերի վերջնական հաղթանակի համար մարտնչող տոկուն կռուցողներին: Դա նոր ուղեգիծ էր մեծ պոետի համար: Վստ թե ուշ այդ ուղեգծին պիտի անցներ ժողովրդի ազատության ռ.: Եղբայրության բարձր պատգամներին կառչած Թումանյանը: Նրա պատմական սրժեքն այն է, որ անցնելով նոր ուղեգծին, պոետը դրանով արդեն թելադրում է բանասերներին ավելի մեծ ու-

շաղրությանը նշմարել և ուսումնասիրել
ժողովրդայնության այն ամուր շեշտը, որ
տիրականորեն իշխում է Հոկտեմբերյան
հեղափոխությունից առաջ հրապարակ-
ված ստեղծագործական երկերի մեջ: Այդ
ժողովրդայնության սկզբունքների հետ է
կապված ժողովուրդների եղբայրության
համար կատարվող պրոպագանդան ու
աշխատանքը: Մեր օրերի նոր սերունդ-
ների համար անցյալի դաժան պայման-
ներում այդ աշխատանքը կազմակերպող
Թումանյանը նույնչափ թանկ է, որքան
ժողովրդայնության մոտիվներով լեցուն
անգուգական բանաստեղծությունների մեծ
արվեստագետ-կառուցողը:

1945

855

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք	5
Հովնաննև Թումանյան (Ռուշեր)	11
Հովհ. Թումանյանի գրական ժառանգությունը	51
Բայրոն և Թումանյան	72
Հովնաննև Թումանյան	84

ԱՐՏԱԾԵՍ ԲԱԼԱՍԻ ԿԱՐԻՆՅԱՆ
АРТАШЕС БАЛАСОВИЧ КАРНИЯН

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Տպագրվում է Հայկ. ՍՍՀ ԳԱ
Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր

Լ. Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հրատարակչական խմբագիր

Լ. Ս. ՍԱՐԱԹՅԱՆ

Նկարչական ձևավորումը

Ն. Հ. ԽԱՆԶԱԴՅԱՆԻ

Տեխնիկական խմբագիր

Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ

Սրբագրիչ

Ա. Ա. ՂԱՓԼԱՆՅԱՆ

ՎՖ 03626 Պատվեր 260 Տպաքանակ 3000
Հրատ. 3592, ԽՀԽ 1366: Հանձնված է արտադրու-
թյան 30/VII 1971 թ., ստորագրված է տպագրու-
թյան 1/IX 1971 թ., տպագր. 5,88 մամուլ + 1 Գերդիր,
Ռրատ. 2,37 մամուլ, պայմ. 2,75 մամուլ, թուղթ № 1,

$60 \times 841/32$, գիճը 29 կ.:

ՀՍՍՀ ԳԱ Ռրատարակչության տպարան, Երևան,

Բարեկամության 24:

642

/400m./

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0020007

ԳԻՆԸ 29 Կ.

17
20722